Ազգ
Azg
27 ՄԱՐՏ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 46(5129)
ISSN: 1829-1651

# Բերեզովսկին կախվելուց առաջ 5 ժամ մենակ էր մնացել

Մեծ Բրիտանիայի ոստիկանությունը երեկ գիշեր հայտարարեց, որ մարտի 23-ին մահացած նախկին ռուսաստանցի օլիգարխ Բորիս Բերեզովսկու դիահերձումն ավարտվել է: Բժշկական եզրակացության համաձայն, մահը վրա է հասել կախվելու հետեւանքով, բայց պայքարի հետքեր չեն հայտնաբերվել: Այդ մասին հաղորդում է «Թելեգրաֆ» թերթը:

Լրագրողները եւ ոստիկանները այժմ գլխավոր վկա են համարում Բերեզովսկու թիկնապահին, իսկ գլխավոր իրեղեն ապացույցը առանձնատանը հայտնաբերված շարֆն է:

Թիկնապահը, որի անունը չի հրապարակվում, պատմել է, որ մարտի 23-ին, առավոտյան ժամը 10-ին Բերեզովսկին իրեն քաղաք էր ուղարկել զանազան հանձնարարություններ կատարելու: Ժամը 15-ին վերադառնալով՝ ինքը Բերեզովսկուն տանը չէր գտել: Նկատել էր նրա բջջային հեռախոսը՝ մի քանի անպատասխան զանգերով: Լոգասենյակի փակ դուռը կոտրելուց հետո այնտեղ գտել էր Բերեզովսկու անշնչացած մարմինը:



Ոստիկանությունը պնդում է, որ քննությունը չի ավարտվել: Անցկացվում են նաեւ թունաբանական փորձաքննություն եւ հյուսվածքների տարրալուծումներ: Դա կարող է տեւել մի քանի շաբաթ: Այդ բոլոր արարողակարգերից հետո մահվան պատճառը կհրապարակվի պաշտոնապես: Առանձնատունը պատկանում է Բերեզովսկու նախկին կնոջը՝ Գալինա Բեշարովային:

Բերեզովսկու հարազատները պետք է շտապ որոշեն նրա հուղարկավորության վայրը: Բացառված չէ, որ դա լինի Ռուսաստանում, ուր վերջին ամիսներին ձգտում էր վերադառնալ փախստական օլիգարխը:

«Թելեգրաֆի» տեղեկությունների համաձայն, Բերեզովսկին վերջերս ունեցել է միայն մեկ թիկնապահ, որը իսրայելական «Մոսսադ» հետախուզության նախկին աշխատակից է եւ որի մասին խոսվեց վերեւում:

# Հետո էլ ասում են՝ ինտերնետը սպանեց կենդանի նամակագրությունը

**Րաֆֆի Հովհաննիսյանը, ինչպես եւ խոստացել էր, երեկ գրեց եւ ուղարկեց Սերժ Սարգսյանի հերթական նամակի հերթական պատասխանը: Դրական գնահատելով նախագահի կողմից ուղղակի գրությամբ պատասխանելը իր համալիր առաջարկին եւ նամակի ընդհանուր ձեւակերպումներում նկատելով որոշ վիճարկելի փաստարկներ ու կանխակալ համոզումներ՝ Րաֆֆին այդուհանդերձ առաջխաղացում է համարում, որ նախագահը պատրաստ է բանակցությունների հիմք ընդունել իր ներկայացրած փաստաթուղթը. «Վերահաստատում եմ իմ պատրաստակամությունը՝ հանդիպելու Ձեզ եւ սեղանին դրված համազգային հանգուցալուծումը քննարկելու ցանկացած ժամի ու ցանկացած ձեւաչափով՝ Ազատության հրապարակում... Եթե ինչ-որ պատճառով Ազատության հրապարակը հարմար վայր չդիտեք հանդիպման առումով, ապա զգացեք կրկին նամակով ներկայացնելու իմ ամբողջական փաստաթղթից բխող՝ Ձեր բովանդակային առաջարկությունները, որոնք Ձեր նախորդ արձագանքում բացակայում էին», գրում է Հովհաննիսյանը՝ միաժամանակ տեղեկացնելով նախագահին, թե իր առողջությամբ մտահոգվելու հարկ չկա, ինքը միանգամայն առողջ է. «Կազդուրման կարիք չունեմ, եւ կարող ենք առանց հետաձգելու իրականացնել մեր աշխատանքային հանդիպումը հանուն սահմանադրական նոր Հայաստանի»:**



**Ազատության հրապարակում երեկ ասուլիսած «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Ռուբեն Հակոբյանը որոշ հստակություն մտցրեց Ռ. Հովհաննիսյանի առաջարկների առումով՝ թե երկխոսության ընթացքում փոխզիջում հնարավոր է, որոշ հարցեր կարող են ավելանալ, որոշները՝ նվազել, քննարկման թեմայի հումքի հղկումը, փոխզիջումը բանական են: Մանավանդ՝ Րաֆֆի Հովհաննիսյանի թիմն իր ներսում ճշտել է այն նշաձողը, որից այն կողմ երկխոսության ընթացքում չեն գնալու: Իսկ թե ինչու վարչապետի հրաժարական չեն պահանջում Րաֆֆի կողմնակիցները, այլ՝ մարզպետների եւ նախարարների, Ռ. Հակոբյանը պատասխանեց՝ բացատրելով, թե քաղաքական ուժեր կան, որ օրը 25 անգամ վարչապետի հրաժարական են պահանջում, բայց ոչ նախագահի, պետք չէ ֆիքսվել անձերի վրա, իրենցը համակարգային մոտեցում է, ու ամեն ինչ պարզ դեմագոգիայի վերածել պետք չէ:**

**Մ. Խ.**

# Ֆեռոմոլիբդենի արտադրությունն աճել է

«Արմենիան մոլիբդեն փրոդաքշնի» արտադրանքը ամբողջությամբ իրացվել է Եվրոպայում: Այդ մասին վարչապետ Տիգրան Սարգսյանին տեղեկացրել են երեկ՝ Երեւանի «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ընկերություն նրա այցելության ժամանակ: Ընկերությունը զբաղվում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի» արդյունահանած հանքանյութի վերամշակմամբ: 2012-ին «Արմենիան մոլիբդեն փրոդաքշնը» արտադրել է 2840 տոննա ֆեռոմոլիբդեն, որի արժեքը կազմել է 20 մլրդ դրամ, ինչը 2011-ի նկատմամբ աճել է 12,7 տոկոսով:



Ընկերությունն ընթացիկ տարում աճ արձանագրելու նպատակով կատարել է աշխատանքներ՝ ուղղված վտանգավոր թափոնները (նախկինում չօգտագործվող թափոններ) վերամշակելու եւ լրացուցիչ քանակի ֆեռոմոլիբդեն ստանալու նպատակով: Նշված գործունեությունն իրականացնելու նպատակով կառավարության 2012-ին ընդունած որոշմամբ «Արմենիան մոլիբդեն փրոդաքշնին» տրամադրվել է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման եւ տեղադրման լիցենզիա: Ներկայումս ընթանում են նոր արտադրամասի սարքավորումների շահագործման աշխատանքներ:

Ընկերությունում աշխատում է շուրջ 500 մարդ, 208 հազար դրամ միջին ամսական աշխատավարձով:

**Ա. Մ.**

# Գույժ. Արսեն Դեմիրճյան

**Երեկ գիշեր խիստ ցավալի լուր ստացանք Մ. Նահանգներից. 80 տարեկանում մահացել է Ռամկավար ազատական կուսակցության վետերան անդամ, շատ գրքերի մեկենաս, Չիկագոյի «Սայաթ-Նովա» նշանավոր ճաշարանի տեր Արսեն Դեմիրճյանը: Բեյրութի ՀԲԸՄիության Հովակիմյան-Մանուկյան վարժարանի առաջին շրջանավարտներից էր, մի սերնդից՝ որին սփյուռքահայ կյանքում առանձնահատուկ առաքելություն էր վիճակված՝ գաղութահայ կյանքի կազմակերպում ազգային կազմակերպությունների միջոցով եւ սեփական նախաձեռնությամբ, բացառապես բոլոր դիրքերում եւ իրավիճակներում: Տպավորիչ էին նրա PR աշխատանքները «Չիկագո Տրիբյուն» թերթի խմբագրության հետ՝ հօգուտ Ղարաբաղյան պահանջատիրության: Նրա մեկենասությամբ լույս են տեսել բազմաթիվ գրքեր, որոնց շարքում՝ Երեւանում Ավագ Հարությունյանի խմբագրությամբ լույս տեսած Արտակ Դարբինյանի «Հայ ազատագրական շարժման օրերէն» եւ Սուրիկ Սարգսյանի հեղինակած «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921)» եւ «1885-1908 թթ. հայ ազգային ազատագրական պայքարը արմենական գործիչների գնահատմամբ» գործերը:**

**Հանգիստ իր աճյուններին: Ցավակցություն հարազատներին ու բոլոր ընկերներին:**

# Ներողության դիմաց Թուրքիան Սիրիայի, Իրաքի եւ Իրանի դեմ կաջակցի՞ Իսրայելին

## *Թե՞ կմիանա Իսրայել-ԱՄՆ դաշինքին*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Մարտի 22-ին վարչապետ Բենիամին Նաթանյահուն, տեղի տալով ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հորդորներին, հեռաձայնել էր Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին, որ ներողություն խնդրի «Մավի Մարմարա» նավի տախտակամածում սպանված 9 թուրքի համար:

Որքան էլ այդ «ներողությունը» 3 տարի ուշացած լինի, այդուամենայնիվ անսպասելի էր: Մանավանդ որ թուրքական մամուլը Նաթանյահու-Էրդողան հեռախոսազրույցը ներկայացնում էր «Իսրայելը ներողություն խնդրեց» ձեւակերպմամբ, թուրքական կառավարությունը դա դիտում էր որպես «Իսրայելի նկատմամբ դիվանագիտական հաղթանակ, որի արդյունքում իսրայելական կողմը բավարարել է Թուրքիայի բոլոր պահանջները», իսկ վարչապետ Էրդողանն էլ, ինչպես odatv.com-ն էր նշել, առանձին ելույթներում ասում էր. «Իսրայելին ծնկի ենք բերել թուրք ազգի առջեւ, ապահովել ենք ապրանքների ազատ մուտքը Գազայի հատված»:

Մարտի 23-ին՝ հեռախոսազրույցի հաջորդ օրը, Էրդողանը, պատասխանելով դրա առնչությամբ թուրքական հանրային հեռուստատեսության հարցերին, մոտավորապես նույն խոսքերն էր ասել. «Մեր եղբայրներից 9-ին նահատակեցին: Սակայն դա չենք հանդուրժել, ոչ էլ թույլ ենք տվել, որ հարձակումը կոծկվի: Պահանջել ենք ներողություն եւ փոխհատուցում: Պահանջել ենք, որ վերանայվի Պաղեստինի շրջափակումը: Եվ ոչ մի հետքայլ չենք կատարել, քանի դեռ չեն բավարարել մեր արդարացի պահանջները: Երեկ Իսրայելի վարչապետը հեռախոսազրույցի ընթացքում ներողության խնդրանքով մեզ դիմեց, եւ մենք էլ թուրք ժողովրդի անունից ընդունեցինք ներողությունը: Փոխհատուցման մեր պահանջն ընդունվել է, եւ խոստացան մեզ վերացնել շրջափակումը (Պաղեստինի): Ալլահի օգնությամբ արդարությունը վերականգնվեց»:

Չնայած Էրդողանի հավաստիացումներին, Պաղեստինի շրջափակումը շարունակում է մնալ ուժի մեջ: Հետեւաբար ընդամենը ցանկատեսություն են ապրանքների մուտքը Գազա ապահովելու մասին Էրդողանի խոսքերը: Գուցե այս խոսքերին ոմանք կհավատան Թուրքիայում, բայց ոչ Պաղեստինում ու Գազայում, ոչ էլ պաղեստինցիներն ու «Համասը»:

*Տես էջ 2*

ԱԶԳ

# Ընթացիկ

## Օսկարակիր Թերենս Ջորջը եւ «Կալիֆոռնիա կուրիեր» շաբաթաթերթի խմբագիր Հարութ Սասունյանը Մանկավարժական համալսարանում





Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը երեկ հյուրընկալել էր իռլանդացի օսկարակիր սցենարիստ եւ ռեժիսոր Թերենս Ջորջին ու ճանաչված հասարակական գործիչ, հրապարակախոս, Լոս Անջելեսի «Կալիֆոռնիա կուրիեր» շաբաթաթերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանին:

Նրանք Հայաստանում էին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի կազմակերպած գիտաժողովի շրջանակում:

«Կալիֆոռնիա կուրիեր» շաբաթաթերթի խմբագիր **Հարութ Սասունյանն** անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը, դրա ճանաչմանը, կորցրած տարածքների եւ վնասների հատուցմանը, նշեց. «Ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ ոչ թե ճանաչում պետք է պահանջենք, այլ փորձենք ստանալ արդարություն: Ժամանակն է դառնալ պահանջատեր»,- եւ ավելացրեց, որ մեծամասշտաբ միջոցառումների միջոցով պետք է աշխարհի ուշադրությունը եւս մեկ անգամ հրավիրել ցեղասպանության ճանաչմանը: Ըստ նրա, աշխարհին մեր պատգամը փոխանցելու համար նախ պետք է պայքարել եւ պահանջել արդարություն, իսկ դա իրականացնելու լավագույն նախապայմանը մեկ ընդհանուր գաղափար ունենալն է: Հարութ Սասունյանն ընդգծում է, որ թուրքական կառավարությունը լրջորեն հետեւում է Հայաստանի կատարած յուրաքանչյուր քայլին: Նրա կարծիքով, անհրաժեշտ է ընդօրինակել հրեաներին՝ սերնդեսերունդ փոխանցել ազգային պահանջատիրության գաղափարը:

Հայաստան այցն **Թերենս Ջորջի** համար մեծ նշանակություն ունի. «Երկու ժողովուրդների ուժը, մշակութային արժեքներն ու հաղթանակները պայմանավորվում են հենց Ցեղասպանություն ապրելու հանգամանքով»,- նշեց իռլանդացի Թերենս Ջորջը, որի նախնիները եւս ապրել են ցեղասպանություն:

Օսկարակիր սցենարիստը կոչ արեց երիտասարդներին՝ ասելով. «Պետք է յուրաքանչյուրդ ներկայացնեք սեփական պատմությունը՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները, մասնավորապես՝ համացանցն ու արվեստը»:

Հանդիպման ավարտին համալսարանի ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը** հյուրերին պարգեւատրեց Մանկավարժական համալսարանի 90-ամյա հոբելյանը խորհրդանշող շքանշանով, հյուրերը շրջեցին համալսարանում, եղան բուհի թանգարանում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Մատաղիսի գործով դատավճիռն անփոփոխ մնաց

ՀՀ քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանը հրապարակեց սպանված զինծառայող Ռոման Եղիազարյանի իրավահաջորդի ներկայացուցիչ Գոհար Մելքոնյանի եւ զինվորական դատախազության վերաքննիչ բողոքով որոշումը: Դատարանը անփոփոխ թողեց Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դեկտեմբերի 18-ի արդարացման դատավճիռը, համաձայն որի Ռոման Եղիազարյանի եւ Հովսեփ Մկրտումյանի 2003թ. սպանության մեջ մեղադրվող Ռազմիկ Սարգսյանը, Արայիկ Զալյանը, Մուսա Սերոբյանը արդարացվել էին:

Ընդհանուր իրավասության դատարանը հիշյալ դատավճռով ամբաստանյալներին անմեղ էր ճանաչել ու արդարացրել կատարված հանցագործությանը նրանց մասնակցությունը ապացուցված չլինելու հիմքով:

Ամբաստանյալները մեղադրվում էին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ եւ 14-րդ կետերով երկու կամ ավելի անձանց առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողների ամբաստանյալների ծառայակիցներ Ռոման Եղիազարյանի ու Հովսեփ Մկրտումյանի մահը:

## Տարոնը Երեւանից Փարիզ է սարքելու

Երեկ ասուլիս տված ՀՀԿ փոխնախագահի **Ռազմիկ Զոհրաբյանը**, խոսելով քաղաքային ավագանու ընտրությունների եւ ՀՀԿ համամասնական ցուցակը գլխավորող Երեւանի ներկա քաղաքապետ Տարոն Մարգարյանի մասին, ասել է, թե նա մայրաքաղաքի արժանի քաղաքապետ է, եւ, ըստ տարբեր հարցումների, ամենաբարձր վարկանիշն ունի մյուս հավանական թեկնածուների շարքում. «Տարոն Մարգարյանը սիրում է քաղաքը, նրան հուզում են քաղաքի խնդիրները, վերջին շրջանում նա ընդհանուրապես 4-5 ժամ է քնում: Շատերը, գնահատելով Մարգարյանի աշխատանքը, նշում են, որ շատ շուտով նա Երեւանից Փարիզ է սարքելու»:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄ

## Հայերենի պահպանումը պետք է լինի մեր ամենօրյա խնդիրը

**Մայրենի լեզվի պահպանությանն էր նվիրված մարտի 23-ին Հայ եկեղեցու վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում կայացած միջոցառումը: Գրական-երաժշտական մոնտաժի մասնակիցներն էին «Հայարտուն» կենտրոնի Սուրբ Եղիա Մարգարեի անվան կիրակնօրյա դպրոցի սաները (ուսուցչուհի՝ Ռոզա Զոհրաբյան), ովքեր ընդամենը մի քանի ամիս առաջ են**



**սկսել սովորել մեսրոպատառ հայերենը: Կիրակնօրյա դպրոցի տարբեր տարիքի շուրջ 40 սովորողներ հոգեհարազատությամբ եւ ոգեշնչումով ներկայացրեցին մայրենի լեզվի զարգացման ուղին, արտասանեցին մայրենիի անմահությանը նվիրված հայ մեծերի բանաստեղծություններն ու ասույթները: Նրանց խոսքում կարեւորվում էր հայերենի պահպանումը ամենօրյա խնդիր դարձնելու անհրաժեշտությունը:**

**Մայրենի լեզուն որպես ազգի գոյատեւման եւ միավորման միջոց արժեւորեցին եւ ստացած լավագույն տպավորությունները կիսեցին բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանը, «Կամուրջ» տարեգրքի գլխավոր խմբագիր Անահիտ Բոստանջյանը, Վիրահայոց թեմի հոգաբարձուների խորհրդի նախագահ Սամվել Աղեկյանը, «Հայարտուն» կենտրոնի կրթական բաժնի պատասխանատու Եվգենյա Մարկոսյանը, կիրակնօրյա դպրոց սաների ծնողները:**

**Օրհնության եւ գնահատանքի իր խոսքում Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը խրախուսեց բարձրաճաշակ միջոցառումը, որը ոգեւորում է դառնալ հայաճանաչ եւ լինել հայախոս: Սրբազան Հայրը կարեւորեց հայ ծնողի դերը, ով ուղղորդում է իր զավակին կիրակնօրյա դպրոց, այդպիսով ձգտում նրան վերադարձնել իր արմատներին: Սրբազան հայրը գնահատանքի խոսքեր ուղղեց ուսուցչուհի Ռոզա Զոհրաբյանին՝ նրա նվիրական աշխատանքի, անդուլ էներգիայի եւ հայապահպանության գործին նվիրվածության համար:**

**Գրական-երաժշտական երեկոն անցկացվեց ՀՀ Սփյուռքի նախարարության «Մայրենիի օրվան» նվիրված միջոցառումների շրջանակներում:**

## Ներողության դիմաց Թուրքիան Սիրիայի, Իրաքի եւ Իրանի դեմ կաջակցի՞ Իսրայելին

*1-ին էջից*

**Իսրայելը չի կատարել նաեւ Թուրքիայի այսպես կոչված արդարացի պահանջները: Ինչ վերաբերում է ներողությանը, ապա դա էլ բանավոր է: Ոչ թե Իսրայելն է պաշտոնապես խնդրել Թուրքիայից, այլ՝ Նաթանյահուն թուրք ժողովրդից: Ընդ որում ոչ թե «Մավի Մարմարա» նավի տախտակամածում 9 թուրքի սպանությանը հանգեցրած իսրայելական հատուկ ջոկատի օպերատիվ գործողության, այլ՝ գործողության ընթացքում հատուկջոկատայինների թույլ տված սխալների համար:**

**Դրանում համոզվելու համար վերհիշենք Թուրքիայի դեռեւս 2010-ին ներկայացված պահանջներն ու դրանք համեմատենք Էրդողանի հետ հեռախոսազրույցի առնչությամբ վարչապետ Նաթանյահուի գրասենյակի տարածած հաղորդագրության ձեւակերպումների հետ:**

**«Մավի Մարմարայի» միջադեպի առնչությամբ Էրդողանի կառավարության ներկայացրած պահանջներին համապատասխան ենթադրվում էր.**

**1. Իսրայելը պաշտոնապես ներողություն խնդրի Թուրքիայից,**

**2. սպանվածների ընտանիքներին հատկացնելու համար փոխհատուցում վճարի Թուրքիային,**

**3. վերացնի Գազայի շրջափակումը:**

**Թուրքական պահանջներին ի պատասխան, Իսրայելը, ինչպես նշված է հաղորդագրության մեջ, ցավ է հայտնել ոչ միտումնավոր հարձակման հետեւանքով առաջացած մարդկային կորուստների համար, միաժամանակ հետաքննության ընթացքում պարզել է, որ իրականացված հատուկ գործողությունն ունեցել է մի շարք սխալներ, որոնց պատճառած զոհերի համար Նաթանյահուն ներողություն է խնդրել թուրք ժողովրդից:**

**Այլ կերպ, Իսրայելը նույնիսկ չի զղջում «Մավի Մարմարայի» վրա ձեռնարկված հարձակման համար, իսկ վարչապետ Նաթանյահուն ընդամենը բանավոր ներողություն է խնդրում, որ հատուկջոկատայինները մի շարք թերացումներով են իրականացրել այդ գործողությունը: Ակնհայտ է, որ Էրդողանի պահանջներից ոչ մեկը չի կատարվել: Թերեւս այդ առումով հասկանալի են ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր, Թուրքիայի ազգային մեծ ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի խոսնակ եւ նախկին դեսպան Օսման Քորութուրքի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուին մարտի 25-ին հասցեագրած հարցումները:**

**Բանավոր անբովանդակ այդ ներողությամբ վարչապետ Նաթանյահուն, պարզապես վերականգնելով Թուրքիայի հետ հարաբերությունները, ընդլայնել է տարածաշրջանում առկա մարտահրավերներին դիմակայելու Իսրայելի հնարավորությունները: Ի դեպ այդ հանգամանքը մարտի 23-ին հաղորդագրությամբ նշել էր ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին, չի թաքցնում նաեւ իսրայելական կողմը:**

**Կնշանակի, ընդունելով վարչապետ Նաթանյահուի բանավոր ներողությունը, վարչապետ Էրդողանը, Իսրայելին ընդառաջելիս, միաժամանակ ընդառաջել է թուրք-իսրայելական հարաբերություններով շահագրգիռ Մ. Նահանգներին: Հավանաբար ամերիկացիներն էլ փոխարենը թուրքերին կնվիրեն խոստացած երկու ռազմանավը, իսկ ավելի քան 4 ամիս Սպիտակ տանը Օբամայի հետ հանդիպման սպասող Էրդողանը վերջապես կստանա ցանկալի հրավերը Վաշինգտոնից:**

**Խնդիրը, սակայն, սոսկ երկու ռազմանավը չէ, ոչ Թուրքիայի վարչապետի Վաշինգտոն այցելելու խնդրանքի բավարարումը, ոչ էլ մարտի 1-ին Վիեննայում սիոնիզմը ֆաշիզմի հետ նույնացնելու Էրդողանի հայտարարությունը, որի պատճառով նվիրասվությունից զաս կասեցվել էր նաեւ վերջինի հրավերը, այլ՝ տարածաշրջանի մարտահրավերներին դիմակայելու Իսրայելի հնարավորությունների ընդլայնումը:**

**Բացառված չէ, որ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի ներողության դիմաց, որքան էլ դա լինի բանավոր ու անբովանդակ, Թուրքիան ստանձնի Սիրիայի, Իրաքի եւ Իրանի դեմ ռազմական գործողություններում Իսրայելին աջակցելու, տարածաշրջանում համատեղ գործելու նկատառումով Իսրայել-ԱՄՆ դաշինքին միանալու պարտավորություն:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# Տխմարությո՞ւն, թե՞ սրբապղծություն

Յոբելյանական տարեդարձերն իրենց օգտակարության հետ նաեւ թաքնված վտանգներ ունեն: Պետք է իմանաս, թե ինչու ես նշում եւ ինչպես: Օրինակ՝ վերջերս Ռուսաստանն ամենայն հանդիսավորությամբ նշեց Ստալինգրադի ճակատամարտի 70-ամյակը: Այն, ինչ կարողացա տեսնել ռուսական հեռուստատեսությամբ, խոսում էր այն մասին, որ տարեդարձը նշվում է ազգային եւ պետական գաղափարախոսության արդի հրամայականով. արթնացնել ռուս ժողովրդի ոգին, սերմանել հերոսականության, անձնազոհության գաղափարը եւ մանավանդ աշխարհին ցույց տալ, որ այդ ճակատամարտով ռուս ժողովուրդը բացեց Եվրոպայի փրկության դուռը: Ամեն ինչ կազմակերպված էր եւ ճշգրտորեն հաշվարկված: Գուցե եղան նաեւ ուրիշ կարծիքներ, սակայն ես որեւէ վրիպում, որեւէ ձախավեր քայլ չտեսա հեռուստահաղորդումներում կամ չկարդացի թերթերում:

Նույնպիսի եւ մեզ համար անհամեմատ ավելի կարեւոր, կարելի է ասել՝ ճակատագրական մի տարեդարձ է սպասվում: Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակը: Երեւի օր չկա, որ լրատվություն չկարդանք այդ առնչությամբ: Խելացի, օգտակար եւ մանավանդ քաղաքականապես գրագետ ծրագրերի եւ նախաձեռնությունների կողքին, երբեմն-երբեմն, հանդիպում են արկածախնդրության, խաբեության, առասպելաբանության «սեռին պատկանող», բացահայտ ստի եւ զավեշտի սահմանագծին գտնվող լրատվություններ: Դրանց հեղինակները հիմնականում եզան պոզին նստած ճանճեր են, որ փորձում են այդ կերպ իրենց անունն ասպարեզ գցել: Թե հետո ինչ կլինի, կարեւոր չէ, կարեւորն այն է, որ մի շրջան անունդ հոլովվելու է:

Փառքի այդ մուրացկաններին ես շատ հակված չեմ մեղադրելու, մեղավորն ավելի շատ մամուլն է, որ պարբերաբար տարածում է այդ կեղծիքները եւ ոչ մի անգամ հերքում չի տպում, իբր, կներեք, հարգելի ընթերցողներ, չարաշահելով մեր դյուրահավատությունը, մոլորության մեջ են գցել մեզ, մենք էլ՝ ձեզ, հաջորդ անգամ մինչեւ տպելն անպայման կստուգենք:

Բայց այն, ինչի մասին պատրաստվում ենք գրել, անհամեմատ ավելի վտանգավոր է, քան համեմատաբար անվնաս այս ստերը եւ, ի տարբերություն դրանց, սպառնում է իրականություն դառնալ:

Փարիզում լույս տեսնող «Ֆիգարոսկոպ»-ի վերջին համարում (մարտի 20-26, 2013թ. էջ 18) տեղ գտած համառոտ լրատվությունը հայտնում է, որ՝ 1993 թ. Հայաստանից Ֆրանսիա գնացած, «երրորդ հարկի» բնակիչ Արմեն Ռոչ (Rotch) անունով մեկը որոշել է յուրովի նշել Եղեռնի հարյուրամյակը: Նա մտադիր է մինչեւ 2015 թ. հունվարը հավաքել 1,5 միլիոն թեյի տոպրակ եւ, ինչպես թերթն է գրում՝ «ստեղծել հավաքական ու վաղանցուկ մի գործ նրանց (զոհերի-Ալ.Թ.) հիշատակին»:

Սակայն դրանք սովորական տոպրակներ չեն լինելու, այլ թեյի գործածված, այսինքն՝ խմված, սեղմված եւ չորացված տոպրակներ:

Թե ինչու թեյի եւ, մանավանդ, ինչու խմված, մեծարգո Ռոչը ոչինչ չի ասում: Գուցե նա մի բան գիտի թեյի եւ հայկական ցեղասպանության թաքնված աղերսների մասին, սակայն նման առնչություն մեզ հայտնի չէ, չնայած մի քանի տասնյակ գրքեր ենք կարդացել այդ նյութին նվիրված: Ցեղասպանության պատմությունը մեզնից ավելի լավ իմացողներ կան, գուցե նրանք ասեն: Մենք հո ամեն ինչ չգիտենք:

Մինչեւ մենք կփորձենք մեր համեստ կարողություններով վերծանել այս առեղծվածը, լուրն արդեն տարածվում է բերնեբերան: Ֆրանսիական թերթի համառոտ լրատվությանն անմիջապես հաջորդել է «Նոյյան տապան»-ի ֆրանսերեն տարբերակը, ըստ որում մանրամասնված եւ նույնիսկ տեսականորեն հիմնավորված:

Համակ ուշադրություն դարձած կարդացինք այդ հոդվածը, բայց, ավա՜ղ, այնտեղ ոչ մի բացատրություն չգտանք, թե թեյն ու ցեղասպանությունն ինչ կապ ունեն իրար հետ: Բայց փոխարենը կարդացինք տեսականի հավակնություն ունեցող այսպիսի մտավարժանքներ. «Ժամանակակից արվեստում շատ հաճախ գաղափարները, հղացքները նախորդում են ստեղծագործությանը: Ինձ համար իրերը գալիս են բնականորեն, ինչպես ակնհայտություն, ոչ թե մեկը մյուսի ետեւից, այլ ավելի շատ մեկը մյուսի հետ...» («Noyan Tapan», Երեւան, N11, մարտ, 2013թ., էջ 5):

Միքելանջելոն յուր Դավիթը քանդակելուց առաջ ոչ միայն «գաղափար» եւ «հղացք» ուներ, այլեւ կերտվելիք գործի հստակ տեսլականը: Եվ ընդհանրապես, մարդը, նույնիսկ ամենաապաշնորհը, ինչ-որ բան անելուց առաջ ինչ-որ գաղափար է ունենում, թեկուզ զառանցագին, բայց ունենում է, միայն մեղուներն են, որ իրենց մեղրամոմե տնակն են կառուցում լոկ բնազդով, առանց որեւէ «հղացքի» կամ «գաղափարի»: Բայց պրն Ռոչը, ինչպես տեսնում ենք, ո՛չ մեկն է, ո՛չ մյուսը: Անշուշտ, նա «գաղափար» ու «բնազդ» ունի, բայց մեզ չի համոզում, թե ինչու թեյ, ինչու խմած եւ ինչու հաստատ 1,5 միլիոն զոհերի հիշատակին: Նույն հաջողությամբ կարող էր սուրճի կապուլներ հավաքել, շշի խցաններ, գործածված պամպերսներ, վերջապես, մեղա՜ Տեր, միլիոնուկես գործածված պահպանակներ... Ի դեպ, ինչո՞ւ ոչ, դա խելքին ավելի մոտիկ կլիներ՝ չէ՞ որ դրանք միլիոնուկես չհղիացված, չծնված մանուկներ են, եթե, իհարկե, այդ պահպանակները բացառապես կանանց հետ հարաբերվելիս են գործածվել...

Բայց կատակը մի կողմ:

Մենք առանձնապես շեշտում ենք Ցեղասպանության հանգամանքը: Իր «երրորդ հարկում», իր նմանների հետ, շառլատանական ինչ փորձարարություն ուզում է թող անի, սակայն ողբերգական այդ նյութին առնչվելիս, նա, ուզի թե չուզի, մտնելու է քաղաքական-գաղափարական մի տարածք, որտեղ գործելու են խաղի որոշակի կանոններ, եւ այդտեղ գեղագիտական ձախողումը խստիվ արգելված է, առանց այն էլ արդեն հասցրել ենք «հայրենասիրական» բավականաչափ աղբ ու զիբիլ արտադրել:

Վերադառնանք Ստալինգրադ: Այդ քաղաքում վերջերս դատեցին եգիպտացի մի արաբի, որը զոհերի հուշարձանին արել էր այն, ինչը պիտի աներ միայն պետքարանում: Նրան տարիուկես տվեցին: Չափազանց մարդասիրական վճիռ, քանի որ, եթե մի քյաֆիր Կաիրեի մզկիթներից մեկի պատին միզեր, ապա ուղղափառ մահմեդականները նրան վայրկենապես կբզկտեին եւ անպատիժ կգնային տուն՝ սպասելով Ալլահի մոտալուտ պարգեւին:

Ասելիքը հետեւյալն է. պրն Ռոչի (ի դեպ, ինչպե՞ս էր կոչվում նա 1993թ. առաջ) մտադրությունը ես չեմ նույնացնում եգիպտացի արաբի սրբապղծության հետ: Պրն Ռոչն առայժմ վաղահաս զառամախտի եւ ինքնահավան տխմարության տիրույթներում է, սակայն մեր օրերում երեւույթների սահմանագծերը չափազանց հեղհեղուկ են, ուստի չի բացառվում, որ իր զգայացունց մտադրությամբ ակամա մոտենա սրբապղծության սահմանին եւ նույնիսկ հաստատվի այնտեղ:

Ուստի եղբոր պես ուզում ենք խնդրել պրն Ռոչին, որ հրաժարվի այդ գաղափարից կամ, եթե արդեն՝ խմած, սեղմված ու չորացված թեյի բավականաչափ պաշար է հավաքել եւ ափսոսում է դեն նետել (պիտի հասկանանք, այնուամենայնիվ ջանք է թափել), թող ուրիշ անուն տա ստեղծագործական իր այդ սլացքին, եթե պետք է, կօգնենք նրան՝ մի բարեհունչ վերնագիր գտնելու, միայն թե, ի սեր Աստծո, օրավուր աճող այդ իսկայական աղբը հեռու պահի ՄԵԿՈՒԿԵՍ ՄԻԼԻՈՆ ԶՈՀԵՐԻ հիշատակից...

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆ**

**Փարիզ, 25 մարտի 2013թ.**

# Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Լեհաստան

Լեհաստանի Հանրապետության Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար Ստանիսլավ Կոզիեյի հրավերով ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը մարտի 26-28-ը պաշտոնական այցով մեկնել է Լեհաստանի Հանրապետություն:

Արթուր Բաղդասարյանը հանդիպումներ կունենա Լեհաստանի Հանրապետության նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկիի, Լեհաստանի Սենատի նախագահ Բոգդան Բորուսեւիչի, Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար Ստանիսլավ Կոզիեյի, Հայ-լեհական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Տոմաշ Տոմչիկեւիչի, Լեհաստանի արտգործնախարարի տեղակալի, Հայաստան-Լեհաստան բարեկամության պատգամավորական խմբի անդամների՝ խմբի ղեկավար, ծագումով հայ Լուկաշ Աբգարովիչի հետ:

Հանդիպումների ընթացքում կքննարկվեն երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացմանը եւ ընդլայնմանը, տնտեսական համագործակցության հեռանկարներին, անվտանգության ոլորտում հայ-լեհական համագործակցության ներկա վիճակին ու հետագա խորացման հնարավորություններին վերաբերող հարցեր:

## ԲՅՈՒՐԱԿԱՆ

# Արդիականացում աստղադիտարանում

**Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում իրականացվում են դիտակների վերականգնման ու արդիականացման աշխատանքներ:**

**Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Հայկ Հարությունյանի փոխանցմամբ՝ աստղադիտարանում ընթացող կարեւոր աշխատանքներից մեկն էլ 2,6 մ երկարությամբ աստղադիտակի հայելու ալյումինապատումն է: Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Հայկ Հարությունյանը տեղակացրեց, որ այս տարեսկզբից Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության որոշմամբ ու հետագայում նաեւ կառավարության հաստատմամբ Բյուրականի աստղադիտարանը ճանաչվել է ազգային արժեք, ինչպես օրինակ՝ Մատենադարանը: Իսկ աստղադիտարանում վերականգնման աշխատանքները մեկնարկել են վակուումային սարքերի վերանորոգմամբ, ինչի համար գումարը տրամադրել է Գիտությունների ակադեմիան: Աստղադիտարանի բյուջեն մինչեւ 2012 թվականը կազմել է 65 միլիոն դրամ, սակայն այս տարի բյուջեից տրամադրվող գումարի չափն ավելացել է՝ կազմելով 185 միլիոն դրամ:**

**Ինչ վերաբերում է Բյուրականի աստղադիտարանը վաճառելու մասին խոսակցություններին, ապա ըստ Հայկ Հարությունյանի, դրանք անհիմն են. ինչպես նշվեց, աստղադիտարանը ճանաչվել է ազգային արժեք, հետեւաբար ոչ ոք չի կարող վաճառել: Իսկ վաճառքի մասին խոսակցությունները ծագել են ելնելով հանգամանքից, որ «Ռոսկոսմոսը» աստղադիտարանում կառուցում է նոր դիտակների կայան, որի կատարած ուսումնասիրություններն ու հայտնագործությունները համարվելու են «Ռոսկոսմոսինը», չնայած կայանում աշխատելու են հայ մասնագետներ: «Ռոսկոսմոս» ընկերության միջոցով առաջիկայում նախատեսվում է Բյուրական բերել նաեւ երեք նոր դիտակներ:**

**Հանդիպման վերջում Հայկ Հարությունյանը հույս է հայտնել, որ բյուջեի ավելացումը կնպաստի, որպեսզի աստղադիտարանի դիտողական տեխնիկան վերականգնումից հետո հասնի ժամանակակից չափանիշներին:**



**Ի. Պ.**

# Հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները

**Հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներն այժմ շատ են բարձրաձայնվում, սակայն որքանո՞վ է խնդիրներին լուծում տրվում, դժվար է հստակ ասել: Անդրադառնալով Երեւանի ավագանու առաջիկա ընտրությունների հասանելիությանը հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ «Ունիսոն» հասարակական կազմակերպության նախագահ Արմեն Ալավերդյանը ցավով նշեց, որ ընտրատեղամասերի միայն 6 տոկոսն է լիովին մատչելի:**

**Իսկ «Հարմոնիա» կույր մարդկանց ՀԿ նախագահ Ալբերտ Աբգարյանն ասաց, որ մեր երկրում 2007 թվականի մարտի 14-ին ընդունված որոշմամբ կույրերը, համապատասխան նշանների օգնությամբ, ունեն գաղտնի եւ ինքնուրույն քվեարկելու հնարավորություն. «Կուրություն ունեցող ընտրողները մինչ ընտրությունը պետք է ծանոթանան դրա կիրառելու ձեւին, կամ կարելի է հենց ընտրատեղամասերում նման դասընթացներ կազմակերպել: Ցավոք, լավ չպատկերացնելով կարգը, կույր մարդիկ իրենց քվեաթերթիկը դարձնում են անվավեր»:**

**«Աշխարհն առանց արգելքների» ՀԿ նախագահ Արման Մուշեղյանն էլ իր հերթին ասաց, որ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ընդգրկված լինեն օրենսդիր եւ գործադիր իշխանության մեջ, քանի որ շատ հաճախ հաշմանդամություն չունեցողները մոռանում են հաշմանդամների խնդիրների մասին:**

**- Մեզանում հաշմանդամների խնդիրներին աստիճանաբար ավելի մեծ ուշադրություն է դարձվում,- նկատում է Ալբերտ Աբգարյանը եւ ավելացնում, որ վերջին 1.5 տարվա ընթացքում շահագործման հանձնված բոլոր շենքերը հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց:**

**Արման Մուշեղյանը նշում է, որ հաշմանդամների իրավունքները պաշտպանող օրենքներ կան, որոնք շատ հաճախ չեն գործում, եւ պետք է վարչական տույժերի ենթարկեն բոլոր նրանց, ովքեր թերանում են այդ հարցում:**

**Հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ստեղծել միջավայր, ոչ թե խղճալ նրանց կամ պարզապես բարի կամք դրսեւորել, պետք է ընդամենը կյանքի կոչել օրենքը, ընդգծեցին բանախոսները:**

**Հուսանք, որ կգա ժամանակ, երբ հաշմանդամություն ունեցող անձինք առանց արգելքների կտեղաշարժվեն եւ կապրեն սովորական մարդու կյանքի ռիթմով: Շատ կարեւոր է նաեւ, որ գործատուները եւս չհրաժարվեն հաշմանդամներին աշխատանքի ընդունելուց, դեռ ավելին՝ ստեղծեն բոլոր պայմանները նրանց համար:**

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Անդրադարձ

# Նոր պապ, նոր հույսեր

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Բենեդիկտոս 15-րդի հրաժարականով մի պահ շփոթ իրավիճակ ստեղծվեց կաթոլիկական եկեղեցու ներսում, որովհետեւ պապությունը ցմահ պաշտոն է եւ հրաժարման մի դեպք է արձանագրվել ցարդ, այն էլ մի հազարամյակ առաջ: Շուտով, սակայն, նոր պապի՝ Ֆրանցիսկի ընտրությամբ ցնծությունը վերականգնվեց կաթոլիկական աշխարհում:

Կարդինալ Աղաջանյանի կենդանության օրոք կոնկլավը շրջանցեց նրան, որովհետեւ այդ ժամանակ միայն իտալացի հոգեւորականներն իրավունք ունեին ընտրվելու այդ պաշտոնում: Բայց նրա մահվանից հետո մի լեհ պապ ընտրվեց, որին հաջորդեց Բենեդիկտոսը՝ Գերմանիայից, իսկ այս վերջինն էլ՝ Հարավային Ամերիկայից: Պապ Ֆրանցիսկը դարձավ Սուրբ Պետրոսի գահի 266-րդ պոնտիֆիկը:

Բայց ինչո՞ւ է նոր պապի ընտրությունն այդքան ոգեւորություն կամ հետաքրքրություն առաջացրել մյուս, այդ թվում նաեւ Հայ առաքելական, եկեղեցիների հավատացյալների շրջանում:

Նախ պետք է ընդունել, որ ոգեւորությունն ու լրատվական միջոցների հետաքրքրությունները վարակիչ են: Երկրորդ՝ գաղտնիք չէ, որ պապական գահն ունի նաեւ հզոր քաղաքական իշխանություն: Ճիշտ է, անցել են այն ժամանակները, երբ պապերն ու կարդինալները Եվրոպայում ունեին բացարձակ իշխանություն անհատների վրա ինկվիզիցիոն գերագույն տրիբունալների միջոցով: Կաթոլիկ հոգեւորականները, նացիստների եւ կոմունիստների նման, վերահսկում էին անհատների մտածողությունը, եւ հերետիկոսության մեղադրանքը մահազանգ էր դրանում կասկածվածների համար: Բայց այսօր էլ պապերն ունեն բարոյական հզոր իշխանություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է վերածվել քաղաքական իշխանության:

Հայկական համայնքներում ոգեւորությունը մասամբ կարելի է բացատրել, որ արգենտինացի նախկին կարդինալ Բերգոլիոն ժամանակին արգենտինահայ համայնքների հետ շփումների ընթացքում հանդես էր եկել Հայոց ցեղասպանությանը վերաբերող դրական հայտարարություններով: Հայաստանի եւ հայերի հետ կապերն էլ ավելի ամրապնդելու նպատակով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ու Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն Վատիկան մեկնեցին՝ մասնակցելու նոր պապի գահակալության արարողություններին: Դա շատ կառուցողական քաղաքական քայլ էր:

Հաղորդվում է, որ յոթ տարի առաջ՝ Հայոց ցեղասպանության 91-րդ տարելիցի հիշատակի միջոցառումների ժամանակ Բուենոս Այրեսում այդ ժամանակ դեռեւս արքեպիսկոպոս Խորխե Մարիո Բերգոլիոն Թուրքիային կոչ է արել անվերապահորեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը որպես «հայ ժողովրդի եւ ողջ մարդկության դեմ գործված Օսմանյան կայսրության ծանրագույն հանցագործություն»: Հաղորդվում է նաեւ, որ նա գործնական դերակատարություն է ունեցել Բուենոս Այրեսի մետրոպոլիտենի վանքում հայկական խաչքար տեղադրելու գործում: Նա ողջունել եւ հանդիպել էր Գարեգին Բ կաթողիկոսին հետ Արգենտինայում եւ մասնակցել Հայ առաքելական եկեղեցու մի շարք էկումենիկ միջոցառումների:

Հայերս պետք է գնահատենք նրա անվեհեր կեցվածքը ցեղասպանության հարցի վերաբերյալ, բայց չմոռանանք, որ մարդիկ իշխանության ավելի բարձր պաշտոններ զբաղեցնելով, հաճախ փոխում են իրենց կարծիքները: Այդպիսի փորձառություն մենք ունեցել ենք: Նախագահներ Օբաման եւ Ջորջ Բուշ կրտսերը, ինչպես նաեւ պետքարտուղարներ Հիլարի Քլինթոնն ու Ջոն Քերրին անամոթաբար փոխել են իրենց դիրքորոշումները պաշտոնի գլուխ անցնելուց հետո:

Մենք հարցականի տակ պետք է դնենք նաեւ Հովհաննես Պողոս Բ պապի խուսափողական ձեւակերպումը, երբ Հայաստան այցելության օրերին, փոխանակ իրերն իրենց անուններով կոչելու, նա պատասխանեց «Մեծ եղեռն» եզրին, որը նույն իմաստը չունի, ինչ ցեղասպանություն բառը: Նա քաղաքական գործիչ չէր, ուստի ի՞նչն էր դրդել նրան դիմելու նման խորամանկության եւ խուսափել ճշգրիտ բառի օգտագործումից:



Դրանով նա փաստորեն ավելի վնաս հասցրեց ցեղասպանության ճանաչման գործընթացին: Նախագահ Օբաման նմանակեց նրան՝ այդ բառի հետեւում թաքցնելով իր բարոյական դիրքորոշումը, որ նա բարձրացրել էր նախքան նախագահ դառնալը:

Հիշենք նաեւ, որ Հովհաննես Պողոս պապը, հակառակ իր հմայիչ արտաքինին եւ Խորհրդային կայսրության փլուզմանը բերած իր լումային, չվարանեց համբուրվել Արգենտինայի զորավար Գալտիերիի հետ: Վերջինս նախագահ Խորխե Ռաֆայել Վիդելայի համագործակցությամբ իրականացրել էր Արգենտինայի կեղտոտ պատերազմը, որ 30 հազար մարդկանց կյանքը խլեց եւ շատերին հաշմանդամ դարձրեց:

Ինչպես նշեցինք, պապությունն իրական աշխարհում ունի նաեւ քաղաքական բնույթ: Այդ էր պատճառը, որ Արգենտինայի ներկա նախագահ Քրիստինա Քիրշները առաջիններից էր պետության ղեկավարներից, որ շտապեց Վատիկան՝ խնդրելու պապին, որ միջամտի իր երկրի անունից Մալվինյան (Ֆոլկլենդյան) կղզիների հարցում: Հայտնի է, որ նոր պոնտիֆիկը տարաձայնություններ ունի տկն Քիրշների եւ նրա վաղամեռիկ ամուսնու՝ նախագահ Նեստոր Քիրշների հետ սոցիալական որոշ հարցերում: Այնպես որ ապագան ցույց է տալու՝ թե նա օժանդակելո՞ւ է Արգենտինային: Բուենոս Այրեսում եղած ժամանակ նա նշել էր, որ Բրիտանիան «ապօրինաբար զավթել» էր այդ տարածքները Արգենտինայից:

Կարծես բանակռիվը այս կղզիների առնչությամբ սաստկանում է այն ժամանակից ի վեր, երբ նավթ հայտնաբերվեց դրանց առափնյա շրջաններում: Քաղաքական այս կողմնակի շոուն համընկնում է պապական տոնակատարությունների հետ: Միեւնույն ժամանակ հեգնական է, որ անամոթաբար ժխտելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ Մեծ Բրիտանիան հանրաքվե է անցկացնում այդ տարածքներում, որոնք հիմնականում բրիտանացիներով են բնակեցված, պարզապես շեշտելու համար, որ Ֆոլկլենդյան կղզիների ժողովուրդն ունի ինքնորոշման իրավունք եւ քվեարկել է հօգուտ Բրիտանիայի հետ մնալուն:

Տարիներ շարունակ Ֆրանցիսկ պապը պաշտպանել է աղքատներին եւ նեցուկ կանգնել նրանց: Նրան բնութագրող գծերից են անձնական հեզությունն ու դավաբանական պահպանողականությունը, չնայած որոշ հարցեր վերջերս բարձրացվել են նրա անգործության վերաբերյալ՝ հատկապես Արգենտինայի բռնատիրական ժամանակահատվածում: Կարծես նա պոնտիֆիկներից ամենաիրազեկն է Հայոց պատմական անցյալի մանրամասներով, եւ մենք պետք է ապավինենք դրան Վատիկանի հետ մեր հարաբերությունների զարգացման գործում:

Հայաստանը վերջերս նախագահի փեսային՝ Միքայել Մինասյանին նոր դեսպան նշանակեց Վատիկանում, նպատակ ունենալով ամրապնդել կապերը Վատիկանի հետ:

Այժմ նոր պապի ընտրությամբ նոր հույսեր են զարթնում: Ֆրանցիսկ պապը վստահաբար կարող է դրական փոփոխություններ մտցնել այդ հարաբերություններում՝ հատկապես վերահաստատելով իր դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում եւ խուսափելով Հովհաննես Պողոս պապի մտացածին շեղումներից:

Դետրոյթ, ԱՄՆ
Թարգմանեց Հ. Ծ.

# Երբ Հռոմի պապը ճիզվիտ է

**Հռոմի նոր պապի՝ Ֆրանցիսկի ընտրության, գահակալության, նրա անհատականության համակողմանի մեկնաբանումներից հետո Ռուսաստանում, բնականաբար, քննության առարկա դարձավ ռուս եւ կաթոլիկ եկեղեցիների հետագա հարաբերությունների հարցը: Գաղտնիք չէ, որ այս երկու «կողմերի» միջեւ գոյություն ունեն ազդեցության ոլորտների հետ կապված էական անհարթություններ: Եվ ասել, թե նոր պապի ընտրությունից հետո լավատեսական տրամադրություններ առաջացան դրանց հարթեցման առաջիկա հնարավորությունների շուրջը, ճիշտ չի լինի: Կաթոլիկությունն այստեղ շատերն են ընկալում որպես լիբերալ-տոտալիտար-սոդոմական-աստվածազրկվող Եվրոպայի կրոնագաղափարական մի հավելված: Նույնիսկ կարծիքներ էին հայտնվում, որ եթե համաձայնություն ձեռք բերվի երկու հոգեւոր առաջնորդների հանդիպման մասին, ապա ցանկալի կլինի կազմակերպել երրորդ՝ չեզոք երկրում:**

**Եվ խնդիրը ոչ միայն Ռուսաստանում տարածված այն մտայնության մեջ է, որ կաթոլիկ կրոնը դարեր շարունակ թշնամաբար է տրամադրված եղել ուղղափառության, ռուսական պետության հանդեպ, դրսեւորելով համաշխարհային կրոնական տիրակալության հասնելու պահանջներ: Պարզապես այստեղ կայունացել է այն մոտեցումը, որ Վատիկանը, ժամանակակից կաթոլիկությունը այնքան են խրվել սեկուլյարիզմի՝ կրոնի աշխարհականացման մեջ, հրապուրվել ավանդների նկատմամբ անհաշտ նորամուծություններով, որ սկսել են փտել ու ինքնակործանման վիրուսով վարակել նաեւ ուրիշներին:**

**Հայտնի է, որ իր բազմադարյան պատմության ընթացքում Վատիկանը եղել է ոչ միայն կրոնական, այլեւ քաղաքական հզոր ու ազդեցիկ կենտրոն: Եվ այս հենքի վրա՝ փոփոխվող պայմաններում նոր երանգներ կարող է ստանալ Վատիկանի նշված կրոնաքաղաքական դերը արդի աշխարհում: Վերարտադրենք առաջադրվող մի տեսակետ՝ դրա հիրավի լաբիրինթոսային հանգուցալուծումների խոր վերլուծությունը թողնելով հայ եկեղեցու խորագիտակ մասնագետներին:**

**Խոսքը վերաբերում է այն պարագային, որ առաջին անգամ Հռոմի պապ է ընտրվել ճիզվիտների միաբանության՝ կաթոլիկ եկեղեցու առանցքային կազմակերպություններից մեկի անդամը: Ինչքան էլ որ ասեն, որ նոր պապը կյանքում զուսպ, համեստ, թույլերին պաշտպանող մարդ է, այնուամենայնիվ առնչությունը ճիզվիտներին չի կարող ազդեցություն չունենալ նրա գործունեության վրա: Ճիզվիտները խիստ կարեւոր դերակատարում ունեն նոր գլոբալ աշխարհակարգի պայմաններում կրոնական վերնախավի գիտակցության ձեւավորման մեջ, ըստ էության համարվելով կաթոլիկության, այսպես ասած, ուղեղային շտաբը, յուրօրինակ մտավորականությունն ու նրա գաղտնի իշխանությունը: Միաբանության առաքելությունը եղել է ոչ միայն վերահսկել Սուրբ Պետրոսի աթոռն ու պապի որոշումները, այլեւ թափանցել մյուս կրոնական կազմակերպությունների եւ, ամենաարտասովորը, աշխարհի տարբեր երկրների կառավարական կառույցների մեջ: Իրենց գործունեության մեջ ճիզվիտները մշակել են մշակութային հարմարվողականության եզակի ու ճկուն մեթոդ, որը նրանց լայն հնարավորություն է տալիս հանգամանքներից կախված կամայականորեն մեկնաբանել կրոնաբարոյական պահանջները, գործել ազատ, չխուսափելով նույնիսկ աշխարհիկ կյանքից, ինչը միաբանության անդամներին դարձրել է ամենահաս միսիոներներ՝ Քրիստոսի, Վատիկանի, Հռոմի պապի զինվորներ աշխարհի ամենատարբեր անկյուններում (հայոց հանրագիտարանը նույնիսկ շատ անողոք է իր ձեւակերպման մեջ. «Միաբանությունը գործադրում է ամենաստոր մեթոդները, առաջնորդվելով «Նպատակն արդարացնում է միջոցները» նշանաբանով): Նորագույն ժամանակներում, սակայն, նրանց գլխավոր խնդիրն է վերափոխել կաթոլիկական ուսմունքն ու գործելակերպը: Եթե նախկինում համաշխարհային կառավարող վերնախավերի տարբեր մակարդակների ներկայացուցիչների հետ փոխհարաբերություններն ապահովող կարեւորագույն կաթոլիկական կազմակերպությունը գործում էր մնալով ստվերում, ապա այժմ նա կանցնի Վատիկանի անմիջական կառավարմանը. ի վերջո առաջին դեմքն ինքը ճիզվիտ է: Եվ եթե նկատի ունենանք, որ կաթոլիկ կրոնը հսկայական խնդիրներ ունի իր իսկ մեղքով՝ հեղինակության անկումով, հավատքից հրաժարված միլիոնավոր մարդկանց եկեղեցի վերադարձնելու գործում, ապա ուրեմն Վատիկանը իրոք կանգնած է մեծ փոփոխությունների առջեւ: Եվ ճիզվիտները այստեղ կփորձեն կաթոլիկական կրոնը դարձնել եթե ոչ միասնական-քրիստոնեական, ապա գոնե գերիշխողը այդ աշխարհում, իսկ Վատիկանը՝ մոլորակը կառավարող կենտրոններից մեկը: Հավակնո՞տ ծրագիր է: Երեւի:**

**Ի դեպ, ճիզվիտների գործունեության մեջ առանձնացվում է նաեւ կրթական-դաստիարակչական ուղղությունը: Հենց միայն նրանց աշխարհասփյուռ համալսարանների թիվն անցնում է հինգ տասնյակից, չհաշված բազում դպրոցներն ու այլ ուսումնական հաստատությունները: Ռուսական թերթերից մեկը հատուկ ուշադրություն էր հրավիրել այն փաստի վրա, որ ճիզվիտական համալսարանական կրթություն են ստացել ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության ու պաշտպանության նախարարության շատ ղեկավարներ՝ Քեյսի, Թենետ, Գեյթս, Փանետա, Բրենան եւ այլք:**

**Եվ վերջապես եւս մի իրադարձություն, որը կարող է երկրորդական թվալ, բայց միայն առաջին հայացքից: Նոր պապին առաջիններից մեկը «ջերմորեն» շնորհավորել էր... Համաշխարհային հրեական կոնգրեսը: Էլի կպաք հրեաներին՝ կասեն ոմանք: Ինչ արած, իր աշխարհանվաճ մաքառումներում այս ցեղը շարունակում է մնալ առաջատարների շարքում: Սիրաշահելով Ֆրանցիսկին, որ նա մինչ այդ միշտ մասնակցել է կոնգրեսի կազմակերպած զանազան միջոցառումներին, հրեական կազմակերպությունը հույս է հայտնել, որ նորընտիր հովվապետը միջոցներ կձեռնարկի, ոչ ավել, ոչ պակաս, կաթոլիկ եկեղեցու այն հոգեւորականների նկատմամբ, որոնք մերժում են Հոլոքոստը, եւ որ նա ամեն ինչ կանի ամրապնդելու Վատիկանի եւ Իսրայելի կապերը:**

**Եթե կարդինալ Խորխե Մարիո Բերգոլիոն Հայոց ցեղասպանության ճանաչման ջատագով էր, ապա ով կարող է ասել, որ այդպիսին կլինի սրբազան քահանայապետ Ֆրանցիսկ պապը: Չափից դուրս տարբեր են շահագրգռությունները: Բոլոր դեպքերում պետք է ակտիվորեն աշխատել նոր պապի հետ: Հրեաների պես:**

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

# ՄԱԿ-ում ադրբեջանական ներկայացուցչությունը ոստիկանական գործառույթներ է իրականացնում

Բոլորիս հիշողության մեջ թարմ է Ֆրանսիայի Ազգային ժողովում ադրբեջանցի «երկու ուսանողի ծեծի ենթարկելու փաստով» հարեւան երկրի բարձրացրած աղմուկը: Բանը հասել էր նույնիսկ ԱԳՆ մակարդակով ֆրանսիական իշխանություններին դիմելուն եւ խնդիր էր դրվել «հասնելու հայ բարբարոսների եւ նրանց հովանավորների հանդեպ արդարացի դատավարության»:

Այդ կապակցությամբ ինչ է արվում՝ դեռեւս ամբողջական տեղեկատվություն չկա: Բայց, ինչպես ասում են, Աստված արդար է դատում: Երեկ ադրբեջանական մամուլում հայտնվել է խիստ ուշագրավ մի տեղեկատվություն:

Ըստ այդմ, «Նյու Յորք սիթի» համալսարանի 3-րդ կուրսի ուսանող Էմիլ Իսմայիլը ՄԱԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցչության աշխատակից Ֆարիդ Ջեբրայիլովի կողմից ենթարկվել է սպառնալիքների: Դա տեղի է ունեցել մարտի 22-ին, Նյու Յորքում ադրբեջանական համայնքի կազմակերպած միջոցառման ժամանակ: Ուսանողը «Թուրան» գործակալության ասել է, որ Ջեբրայիլովը հարձակվել է իր վրա եւ փորձել հարվածել: Ակցիայի մասնակիցներին հաջողվել է կանխել Ջեբրայիլովի հարձակումը եւ նրան հեռացնել միջոցառման վայրից:

Իսմայիլը տեղեկացրել է, որ «դիմել է Նյու Յորքի ոստիկանություն, որտեղ նրան խոստացել են հետաքննություն անցկացնել»: Չնայած Ջեբրայիլովը դիվանագիտական անձեռնմխելիություն ունի, ուսանողը մտադիր է հասնել նրա պատժմանը (տես http://www.contact.az/docs/2013/Politics/032500032290ru.htm#.UVFW–BdsZ20):

Նույն աղբյուրի տեղեկացմամբ, մարտի 22-ին ՄԱԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցչության նստավայրի դիմաց տեղի ադրբեջանական համայնքը կազմակերպել է ակցիա՝ «ի նշան Ադրբեջանում երիտասարդության հանդեպ գործադրվող բռնությունների»: Միջադեպի մասին մեկնաբանություններ ստանալու եւ պաշտոնական արձագանքը ներկայացնելու խնդրանքով «Թուրան»-ը դիմել է Ադրբեջանի արտգործնախարարությանը, որտեղ, սակայն, հրաժարվել են «մինչեւ վերջ լսել լրագրողին»:

Վերջերս Իլհամ Ալիեւի աշխատակազմի հասարակական-քաղաքական բաժինը Ժնեւում կազմակերպել էր եվրոպական երկրներում ուսանող ադրբեջանցի երիտասարդների հերթական հավաք, որին մասնակցել էր բաժնի վարիչ Ալի Հասանովը: Վերջինս առանց այլեւայլությունների հայտարարել էր, որ արտերկրում «յուրաքանչյուր ադրբեջանցի իր երկրի դեսպանն է եւ պետք է ամեն ինչ անի հանուն նրա»:

«Հանուն երկրի»՝ Ադրբեջանի իշխող վարչախումբը հասկանում է հանուն իր ապահովության: Նյու Յորքում ապրող ադրբեջանցիները, ինչպես տեսնում ենք, խնդիրը հասկացել են ոչ այնպես, ինչպես ձեւակերպում է Իլհամ Ալիեւի աշխատակազմը: Եվ, բնականաբար, ենթարկվել են ՄԱԿ-ում իրենց երկրի դիվանագիտական ներկայացուցչության սպառնալիքներին:

Էմիլ Իսմայիլը «Թուրան»-ին տեղեկացրել է, որ միջադեպից ամիսներ առաջ Ջեբրայիլովն իրեն «սպառնալիքներ է փոխանցել ծանոթների միջոցով»: Դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված անձնավորությունն, այսպիսով, Միացյալ Նահանգներում կատարում է Ադրբեջանի հատուկ ծառայությունների կամ առնվազն ոստիկանության գործառույթներ՝ վերահսկում է ադրբեջանական համայնքի կյանքը, նրա առանձին անդամների ենթարկում «անհրաժեշտ մշակման»:

Հետաքրքրական է՝ ինչպիսի՞ն է լինելու ԱՄՆ օրինապահ մարմինների արձագանքը: Կարողանալո՞ւ են նրանք ապահովել ադրբեջանցի ուսանողի անվտանգությունը: Իսկ Միավորված ազգերի կազմակերպության աշխատանքային մարմիններն ի՞նչ վերաբերմունք են ցուցաբերելու ոստիկան-«դիվանագետի» հանդեպ: Մեր կողմից կարող ենք խորհուրդ տալ. ՆԳՆ նախարար Ռամիլ Ուսուբովն արդեն 67 տարեկան է, արժե Ջեբրայիլովին հետ կանչել դիվանագիտական ծառայությունից եւ նշանակել թիվ մեկ ոստիկան: Միեւնույն է, նա արդեն ինքնաբացահայտվել է որպես Ադրբեջանի ուժային կառույցներից մեկի գործակալ:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# ԿՀՎ գործակալները՝ սիրիացի ապստամբների զինման կազմակերպիչներ

ԿՀՎ գործակալներն ակտիվորեն մասնակցում են Թուրքիայի տարածքով սիրիացի ապստամբների զինմանը, հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը:

Հրապարակված տվյալների համաձայն, զենքի մատակարարումները սկսվել են 2012-ի առաջին ամիսներին: Նախնական փուլում սիրիական ընդդիմությունը ստացել է զենքի աննշան քանակություն, իսկ հետո ծավալները զգալիորեն աճել են: Հորդանանից, Սաուդյան Արաբիայից եւ Քաթարից ընդհանուր առմամբ իրականացվել է առնվազն 160 բեռնատար չվերթ, մեծ մասը՝ Անկարայի մոտ գտնվող օդանավակայան, որտեղից զենքը տեղափոխվել է Սիրիա: Երբ սիրիական ընդդիմությունը իր վերահսկողության տակ առավ Թուրքիային սահմանակից շրջանը, օդանավերը սկսեցին վայրէջք կատարել սահմանամերձ գոտում: Թերթի տվյալներով, ԿՀՎ գործակալները հիմնականում զբաղվում են խորհրդատվությամբ: Պաշտոնական մակարդակով ԿՀՎ-ն հրաժարվում է մեկնաբանել այս տեղեկությունները:

ԱՄՆ-ը պնդում է, թե Իրանը եւս զենք է մատակարարում Սիրիային, միայն թե՝ նախագահ Բաշար Ասադի վարչակարգին:

**Պ. Ք.**

# Զամբիայի նախկին նախագահը ձերբակալվել է



Զամբիայում ձերբակալվել է երկրի նախկին նախագահ Ռուփիահ Բանդան: Նրան մեղադրում են պաշտոնեական իրավասությունների վերազանցման մեջ, որի հետեւանքով բյուջեից վասնվել է ավելի քան 11 մլն դոլար: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Բանդային գրավի դիմաց բաց են թողել: Մարտի 26-ին նա ներկայացել է դատարան:

Նախկին նախագահը մեղադրվում է այն բանում, որ նա ոչ շահավետ գործարք է կնքել Նիգերիայից նավթի մատակարարման վերաբերյալ, որի հետեւանքով Զամբիան կորցրել է 11 մլն դոլար:

Բանդան իր մեղքը չի ընդունում եւ հավաստացնում է, թե անմեղությունը կապացուցի դատարանում: Նրա փաստաբանը պնդում է, թե մեղադրանքները քաղաքական ասպառ ունեն:

Օրերս Զամբիայի խորհրդարանը Բանդային զրկել էր անձեռնմխելիությունից: Ներկայիս նախագահ Մայքլ Սատայի կառավարությունում հայտարարել են, որ Բանդան մասնակից է նաեւ կաշառակերությանը, փողերի լվացմանը եւ խարդախությանը: Սակայն Zambia Reports թերթը հաղորդում է, որ համապատասխան հոդվածներով մեղադրանքներ նրան դեռ չեն ներկայացվել:

Ռուփիահ Բանդան Զամբիայի 4-րդ նախագահն էր: Նա պաշտոնավարել է 2008-ի նոյեմբերից մինչեւ 2011-ի սեպտեմբեր: Նրանից հետո նախագահ ընտրված Սատան մի քանի խոշոր հակակոռուպցիոն քննության է սկսել նախորդ վարչակազմի ներկայացուցիչների նկատմամբ:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

# Հյուսիսկորեական հրթիռները ընդդեմ ամերիկյան ռազմակայանների



Հյուսիսկորեական բանակի հրթիռային զորամասերը եւ հեռահար հետրանին բերված են բարձր մարտավիճակի: Պատճառը ԱՄՆ-ի եւ Հարավային Կորեայի լայնածավալ զորավարժությունների շարունակումն է ԿԺԴՀ սահմանների մոտ:

ԿԺԴՀ ղեկավարությունը նախազգուշացրել է, որ հյուսիսկորեական հրթիռների թիրախներ կդառնան Գուամ կղզում, Հարավային Կորեայում եւ ԱՄՆ մայրցամաքային մասում գտնվող ամերիկյան ռազմակայանները: «ԿԺԴՀ-ն այլեւս չի հանդուրժի ԱՄՆ-ի ռազմական սպառնալիքները», ասվում է հյուսիսկորեական բանակի գերագույն հրամանատարության հայտարարության մեջ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ ԿԺԴՀ առաջնորդ Կիմ Չոն Ինը մարտի 25-ին ղեկավարել է հակադեսանտային պաշտպանության զորավարժությունները:

Կորեական թերակղզում իրադրությունը կտրուկ բարդացավ 2012-ի դեկտեմբերին հյուսիսկորեական արբանյակի արձակումից եւ 2013-ի փետրվարին 3-րդ ստորգետնյա միջուկային փորձարկման անցկացումից հետո: Ի պատասխան՝ ՄԱԿ-ի ԱԽ-ն խստացրեց ԿԺԴՀ-ի դեմ ուղղված պատժամիջոցները: Փենյանում կարծում են, որ ՄԱԿ-ի ԱԽ նոր, «հանցավոր փաստաթղթերը» ընդունվել են Վաշինգտոնի եւ Սեուլի պարտադրանքով:

# Քադդաֆիի ընտանիքին ապաստանել է Օմանում




Օմանի սուլթանությունը ապաստան է տվել Լիբիայի նախկին ղեկավար Մուամմար Քադդաֆիի ընտանիքի անդամներին: Այդ մասին հայտարարել է Լիբիայի արտգործնախարար Մուհամմեդ Աբդ ալ Ազիզը:

Լիբիայի քաղաքացիական պատերազմի ժամանակ երկրից հեռացել էին Քադդաֆիի կինը՝ Սաֆիան, դուստր Այշան եւ որդիներից երեքը՝ Սաադին, Մուհամմեդը եւ Հաննիբալը: Երեք որդիներ՝ Մութասիմը, Սայֆ ալ Արաբը եւ Խամիսը, զոհվել էին մարտական գործողությունների ընթացքում: Չորրորդ որդին՝ Սայֆ ալ Իսլամը, գերի էր ընկել եւ մինչեւ օրս բանտարկված է Լիբիայում:

Օմանի իշխանությունները երեկ հաստատել են, որ իրենք ընդունել են Քադդաֆիի ընտանիքի անդամներին: Gulf news կայքէջը հիշեցնում է, որ Սաադի Քադդաֆին ժամանակին Լիբիայից փախել էր ոչ թե Ալժիր, այլ Նիգեր: Օմանի կառավարությունը Քադդաֆիի ընտանիքի անդամներին ապաստան է տրամադրել քաղաքական գործունեությամբ չզբաղվելու խոստման դիմաց:

Լիբիայի նոր իշխանությունների խնդրանքով Ինտերպոլը Այշային եւ Մուհամմեդ Քադդաֆիին ձերբակալելու կարգադրություն է արել: Մուհամմեդ Աբդ ալ Ազիզի խոսքերով, Լիբիայի կառավարությունը դեռ չի որոշել, կպահանջի՞ արդյոք արտահանձնել նրանց:

# Բուխարեստի հայկական եկեղեցու թանգարանը բացում է իր դռները ուսումնասիրողների առջեւ



Ռումինիայի հայկական համայնքը հարյուրավոր տարիների հարուստ պատմություն ունի: Դարեր շարունակ հայերն այստեղ ապրել եւ ծավալել են մշակութային խոշոր գործունեություն: Դրա մասին վկայում են ինչպես գրավոր աղբյուրները, այնպես էլ Ռումինիայի ամբողջ տարածքով մեկ սփռված հայկական եկեղեցիներն ու վանքերը:

Հեռանալով պատմական հայրենիքից՝ հայերն իրենց հետ Ռումինիա են բերել հայ արվեստի բազմաթիվ նմուշներ՝ նկարազարդ ձեռագրեր, արծաթե իրեր, սրբապատկերներ, գորգեր, եկեղեցական հանդերձանքի նմուշներ: Հաստատվելով օտար հողի վրա՝ տեղում հիմնել են արվեստանոցներ՝ պահպանելով դարերից եկող ավանդույթները, ինչպես նաեւ փոխառել նոր միջավայրի մշակութային առանձնահատկությունները:

Հայ արվեստի գանձերն այնքան շատ են եղել Ռումինիայում, որ 1930 թվականին նշանավոր հայագետ Հակոբ Սիրունին Բուխարեստում կազմակերպել է Հայ արվեստին նվիրված մեծ ցուցահանդես, որին ներկա է եղել անգամ Ռումինիայի թագավորը: Այս հարցում Սիրունուն մեծ օգնություն է ցուցաբերել ռումինացի խոշոր գիտնական Նիկոլայ Յորգան, որը նաեւ զբաղվել է Ռումինիայի հայկական համայնքի պատմության ուսումնասիրությամբ:

20-րդ դարում քաղաքական ցնցումների պատճառով մեծ թվով հայեր հեռացան երկրից: Այժմ Ռումինիան ունի փոքրաթիվ հայկական համայնք, որը մեծ մասամբ հայախոս չէ:

Նման իրավիճակում չափազանց կարեւոր է ուսումնասիրել ու փրկել այն, ինչ դարեր շարունակ ստեղծել են հայերն այդ հողի վրա:

Այս ամենը քաջ գիտակցելով՝ Տաթեւ եպս. Հակոբյանը, ստանձնելով Ռումինահայոց թեմի առաջնորդությունը, նվիրվել է այս տարածաշրջանում հայկական դարավոր ժառանգության պահպանման ազգանվեր գործին: Իր հոգածության տակ առնելով Ռումինիայի զանազան հայկական եկեղեցիներում պահվող եկեղեցական եւ աշխարհիկ արվեստի գործերի ողջ հավաքածուն՝ նա ձեռնամուխ է եղել դրանց ուսումնասիրության եւ պահպանման գործի կազմակերպմանը: Նմուշների մի մասը այս նպատակով Բուխարեստի հայկական եկեղեցու թանգարան է բերվել:



Այժմ թանգարանում պահվում են մեծ թվով արծաթե իրեր, եկեղեցական հագուստներ, գորգեր, ձեռագրեր, գեղանկարչական աշխատանքներ, փայտարվեստի նմուշներ, որոնք մասնագիտական լուրջ հետազոտության կարիք ունեն:

Այդ պատճառով Տաթեւ եպս. Հակոբյանը եւ ԵՊՀ Հայ արվեստի պատմության եւ տեսության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր Լեւոն Չուգասզյանը համաձայնության են եկել կազմակերպելու Ռումինիայի հայկական եկեղեցու գանձերի ուսումնասիրությունը: Այս հայրենանվեր գործին սիրով եւ մեծ պատրաստակամությամբ օժանդակեցին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար պարոն Արսեն Քարամյանը՝ հոգալով Ռումինիա մեկնող առաջին մասնագետների ճանապարհածախսը:

Համագործակցության սկիզբը դրվեց 2012 թվականի աշնանը. Երեւանի պետական համալսարանի Հայ արվեստի պատմության եւ տեսության ամբիոնի երիտասարդ դասախոսներ Նելլի Սմբատյանը եւ Մարիամ Վարդանյանը մեկնեցին Բուխարեստ՝ տեղի հայկական Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու Տոսյան թանգարանում աշխատելու համար: Նելլի Սմբատյանը զբաղվում է հայկական եկեղեցական հագուստի, իսկ Մարիամ Վարդանյանը՝ հայկական արծաթագործության ուսումնասիրությամբ:

Աշխատանքներն ավարտելուց հետո նախատեսվում է հրատարակել կատալոգ, որտեղ կներկայացվեն Բուխարեստում պահվող գանձերը:

Հուսով ենք, որ այս այցելությունները կշարունակվեն, եւ պարբերաբար Բուխարեստ կմեկնեն տարբեր ոլորտների մասնագետներ՝ ուսումնասիրելու հայկական գեղարվեստական հսկայական ժառանգությունը:

**ՆԵԼԼԻ ՍՄԲԱՏՅԱՆ**
**ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

# «Գրական թերթն» արդեն առցանց տարբերակով

Երեկ տեղի ունեցավ www.grakantert.am կայքի շնորհանդեսը:

«Գրական թերթը» Հայաստանի գրողների միության պաշտոնական թերթն է, որն այժմ արդեն հասանելի է առցանց տարբերակով:

Կայքը բաղկացած է արվեստանոց, գրականագիտություն եւ գրախոսություն, գրողի քաղաքական ամբիոն, երգիծանք, էսսե, թարգմանություն, խմբագրի անկյուն, հետահայաց, հյուրասենյակ, հոբելյաններ, հրապարակախոսություն, պատմվածք, պոեզիա եւ այսպես էլ է պատահում բաժիններից:

Չնայած կայքը դեռ նոր-նոր է դարձել հասանելի, սակայն ըստ շնորհանդեսի կազմակերպիչների մեծ հետաքրքրություն է նկատվում հանրության կողմից:

«Գրական թերթի» պաշտոնական կայքի գաղափարը վաղուց է եղել եւ սփյուռքահայ բարերարների շնորհիվ այն կյանքի կոչվեց,- նշեց թերթի գլխավոր խմբագիր, թատերագիր Կարինե Խոդիկյանը: «Ազգի» հետ զրույցում նա ընդգծեց, որ այն հոդվածները, որոնք ծավալի պատճառով մասամբ են տպագրվում թերթում, ամբողջական տարբերակով կտեղադրվեն կայքում:

Իսկ այն համարները, որոնք լույս կտեսնեն, կայքում կտեղադրվեն թերթի լույսընծայումից մեկ շաբաթ անց:

Խմբագրի ցանկությունն է, որ կայքում լինեն նաեւ «Գրական թերթի» բոլոր համարները՝ սկսած առաջինից, ինչը մեծ աշխատանքների հետ է կապված:

Բարի երթ մաղթենք կայքէջին ու նրա աշխատակազմին:

**Ս. Հ.**



# Հայկական ճարտարապետությանը նվիրված ցուցահանդես Բելգրադում



**Մարտի 21-ին Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում տեղի ունեցավ հայտնի լուսանկարիչ, Սերգեյ Փարաջանովի թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանի լուսանկարների ցուցահանդեսի հանդիսավոր բացումը: Ցուցադրության կազմակերպիչներն են Սերբիայում ՀՀ պատվավոր հյուպատոսությունը եւ Սերբիայի հայկական միությունը՝ Աթենքում ՀՀ դեսպանության աջակցությամբ:**

**Բելգրադի «Ռուսական տան» մեծ դահլիճում անցկացվող հայկական ճարտարապետությանը նվիրված ցուցահանդեսը կրում է «Հայաստան՝ բիբլիական երկիր Արարատի ներքո» խորագիրը:**

**Բազմամարդ հանդիսությանը ներկա էին երկրում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, Սերբիայի արտաքին գործերի նախարարության, մշակութային ու հասարակական կազմակերպությունների, գիտության, մշակույթի եւ արվեստի, ինչպես նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներ, գործարարներ ու լրագրողներ:**

**Ողջույնի խոսքով հանդես եկան Սերբիայի հայկական միության նախագահ Սամվել Այվազյանը եւ «Ռուսական տան» տնօրեն Միխայիլ Դենիսովը: ՀՀ պատվավոր հյուպատոս Պրեդրագ Տոմիչը ընթերցեց ՀՀ դեսպան Գագիկ Ղալաչյանի ուղերձը: Ելույթով ներկաներին դիմեց հեղինակը՝ Զավեն Սարգսյանը: Բանաստեղծուհի Լյուբիցա Միլետիչն ընթերցեց Հայաստանին նվիրված բանաստեղծություններ:**

**Միջոցառումը լայն արձագանք գտավ սերբական ԶԼՄ-ներում: Կենտրոնական «ՌՏՍ», ինչպես նաեւ «Ստուդիո-Բ» եւ «Փինք» հեռուստաալիքները ցուցադրեցին տեսանյութեր բացման արարողության վերաբերյալ՝ Հայաստանի, հեղինակի ու լուսանկարների մասին մանրամասներով: Ցուցահանդեսին անդրադարձավ նաեւ Սերբիայի տպագիր մամուլը, մասնավորապես՝ երկրի առաջատար թերթերից «Պոլիտիկա» օրաթերթը:**

# Հայկական կինոյին նվիրված երեկո Ֆրիբուրգի միջազգային կինոփառատոնի շրջանակներում




**Մարտի 16-23-ը տեղի ունեցած Ֆրիբուրգի 27-րդ միջազգային կինոփառատոնի (27 Festival International de Films de Fribourg) շրջանակներում կազմակերպվեց հայկական կինոնկարների ցուցադրման երեկո, որին պատվավոր հյուրի կարգավիճակով մասնակցեց Շվեյցարիայում ՀՀ դեսպան Շարլ Ազնավուրը: Փառատոնի շրջանակներում մարտի 21-ին ցուցադրվեցին Ատոմ Էգոյանի «Արարատ», Սերգեյ Փարաջանովի «Սայաթ-Նովա» եւ Օքսանա Միրզոյանի «140 դրամ» կինոնկարները:**

**Կինոցուցադրմանը հաջորդեց «Սփյուռք. Ատոմ Էգոյանը եւ Հայաստանը» խորագրով Հայաստանին նվիրված քննարկումները, որոնց մասնակցեցին դեսպան Շարլ Ազնավուրը, Ժնեւի համալսարանի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ղեկավար Վալենտինա Կալզոլարի Բուֆեն, կինոռեժիսոր Օքսանա Միրզոյանը, կինոդրոդյուսեր Բրադեն Քինգը եւ Հարվարդի համալսարանի հայագիտության պրոֆեսոր Ջեյմս Ռասելը:**

**Քննարկումների ընթացքում, որոնց ներկա էր մոտ 250 հոգի, դեսպան Ազնավուրը ներկայացրեց Հայաստանը, հայ ժողովրդին, հայկական մշակույթը, հայոց պատմությունը: Իր ելույթում նա կարեւորեց մշակույթի եւ, մասնավորապես, կինոյի դերը Հայոց ցեղասպանության ճանաչմանը նպաստելու գործում:**

**Կինոփառատոնի ընթացքում հայկական ֆիլմերի ցուցադրությունը եւ դրան դեսպան Ազնավուրի մասնակցությունը լայնորեն լուսաբանվեցին շվեյցարական մամուլում եւ հեռուստատեսությամբ:**

**Տեղեկանք: Ֆրիբուրգի կինոփառատոնը հանրաճանաչ մշակութային միջոցառում է, որի նպատակներից մեկն է աշխարհի տարբեր մշակույթների ներկայացումը:**

# Խայտառակ պարտություն չեխերի հետ մրցավեճում

*9 տարի անց պատմությունը կրկնվեց*

Հայաստանի ազգային հավաքականը չկարողացավ արժանի դիմադրություն ցույց տալ Չեխիայի ընտրանուն, որը երեւանյան հանդիպումից ընդամենը 3 օր առաջ սեփական հարկի տակ 0-3 հաշվով պարտվել էր դանիացիներին: Չեխերը վրեժխնդիր եղան հայերից՝ 3-0 խոշոր հաշվով համոզիչ հաղթանակ տոնելով:




Միայն առաջին խաղակեսում մեր հավաքականին հաջողվեց քիչ թե շատ մրցակցել հյուրերի հետ: Մեր հավաքականը հիմնականում գրոհները կազմակերպում էր ձախ եզրով, որտեղ բավականին ակտիվ էին գործում Գեւորգ Ղազարյանն ու Յուրա Մովսիսյանը: Վերջինս թեեւ գտնվում էր հյուրերի պաշտպանների խիստ հսկողության տակ, կարողացավ մի քանի դրվագներում ձերբազատվել նրանցից ու սպառնալ Պետեր Չեխի պաշտպանած դարպասին: Սակայն, ցավոք, այդպես էլ մարզասերները գոլի բերկրանքը չվայելեցին:

Աչլետիկ կազմվածքով չեխ ֆուտբոլիստները բավականին հմտորեն էին գործում՝ մեկ հպումով փոխանցումներով արագ գրոհներ կազմակերպելով: Հատկապես վտանգավոր էին ստանդարտ դրությունները, որոնց ժամանակ չեխերը հաճախակի էին հաղթող դուրս գալիս օդային մենամարտում ու վտանգավոր պահեր ստեղծում Բերեզովսկու պաշտպանած դարպասին: Բայց առաջին խաղակեսում մեր դարպասապահը վստահ խաղաց մի քանի դրվագներում՝ չեզոքացնելով վտանգը:

Թվում էր, թե ընդմիջումից հետո դաշտի տերերը ավելի կակտիվանան եւ մեծ ուժերով ճնշում կգործադրեն չեխերի դարպասին: Բայց 47-րդ րոպեին բաց թողած գոլը լրիվ կազմալուծեց մեր հավաքականի խաղը: Չեխերը հմտորեն օգտվեցին դաշտի կենտրոնում մեր ֆուտբոլիստների անփութությունից եւ արագ հակագրոհի արդյունքում Թոմաշ Ռոսիցկին գլխի հարվածով բացեց խաղի հաշիվը: Դրանից հետո դաշտի տերերին մնում էր մեծ ուժերով գրոհներ կազմակերպել ու փորձել վերականգնել հավասարակշռությունը: Ցավոք այս անգամ մեր ֆուտբոլիստների խաղն առջեւի գծում չստացվեց:

Երկրորդ խաղակեսում նրանց գրոհները հիմնականում անավարտ էին մնում սխալ փոխանցումների հետեւանքով: Իրենց հնարավորություններից ցածր հանդես եկան Մարկոսը, Էդգար Մանուչարյանը, Հենրիխ Մխիթարյանն ու Յուրա Մովսիսյանը, իսկ Արաս Օզբիլիսի եւ Արթուր Սարկիսովի խաղադաշտ դուրս գալը առանձնապես սրություն չմտցրեց հավաքականի գրոհներում: Իսկ ահա չեխերը կրկին հմտորեն օգտագործեցին մեր պաշտպանների սխալները եւ երկու անգամ հասան հաջողության: Աչքի ընկան Մաթեյ Վիդրան եւ Դանիել Կոլարը:

Այսպիսով, Հայաստանի հավաքականն ընտրական մրցաշարում երրորդ անընդմեջ պարտությունը կրեց ու էլ ավելի վատթարացրեց մրցաշարային իրավիճակը: Կրկնվեց 9 տարվա վաղեմության պատմությունը: 2004-ին Բեռնար Կազոնիի օրոք Հայաստանի հավաքականը Երեւանում պարտվել էր նույնպիսի՝ 0-3 հաշվով:

Չեխերի հետ հանդիպումը ցույց տվեց, որ Հայաստանի հավաքականում լուրջ հիմնախնդիրներ կան ոչ միայն պաշտպանության, այլ նաեւ գրոհների կազմակերպման եւ դրանց արդյունավետ եզրափակման հարցերում: Արդարության համար պետք է նշել, որ նման խաղով Չեխիայի հավաքականի պես ուժեղ մրցակցի հետ պայքարում դժվար էր հաջողություն ակնկալել: Այս պարտությունը մեր ֆուտբոլիստների համար պետք է դաս լինի: Հարկավոր է լուրջ հետեւություններ հանգել, որպեսզի հետագա հանդիպումներում էլ հավաքականի խաղը դառը հիասթափություն չպատճառի ֆուտբոլասերներին, որոնք իրենց սիրելի թիմի հաղթանակի ակնկալիքով էին երեկ հավաքվել «Հանրապետական» մարզադաշտում:

# Մկրտչյանը պահպանեց 2-րդ հորիզոնականը

Հնդկաստանում ընթացող շախմատի կանանց մրցաշարի 10-րդ տուրում Լիլիթ Մկրտչյանը ոչ-ոքի խաղաց Գիաթե Սվաթիի հետ, իսկ Էլինա Դանիելյանը հաշտություն կնքեց Մարի Գոմեսի հետ: Լիլիթը 6,5 միավորով 2-րդ տեղում է, Էլինան 5 միավորով հանգրվանել է 6-րդ հորիզոնականում:

Առաջատարը ռուսաստանցի Օլգա Գիրյան է, որը հաշտություն կնքելով Ռութ Պադմինիի հետ, վաստակեց 7,5 միավոր: Ավարտական տուրում Լիլիթ Մկրտչյանը սեւերով կխաղա Էլիզաբեթ Պյոտչի հետ, իսկ Էլինա Դանիելյանի մրցակիցը կլինի Նիշա Մոհոտան:

# Միրչա Լուչեսկուն եւս 2 տարի կգլխավորի «Շախտյորը»

Միրչա Լուչեսկուն չի լքի Դոնեցկի «Շախտյորը»: Ռումինացի մարզիչը 2 տարվա պայմանագիր է կնքել ակումբի հետ: «Շախտյորի» նախագահ Ռինատ Ախմետովը նշել է, որ պայմանագիր կնքելիս գումարի մասին ընդհանրապես խոսք չի եղել: Ակումբի նախագահին հետաքրքրել է միայն մեկ հարց, թե արդյոք թիմը կարո՞ղ է Լուչեսկու գլխավորությամբ շարունակել առաջընթացը: Ռումինացի մարզիչը նշել է, որ սիրում է իր սաներին ու թիմի երկրպագուներին, հավատում է օգնականներին եւ համոզված է, որ բոլոր ջանքերը կենտրոնացնելով, կարող են նորանոր բարձունքներ նվաճել:




Այսպիսով, վերջ տրվեցին այն խոսակցություններին, թե իբր Լուչեսկուն մրցաշրջանի ավարտից հետո հեռանալու է «Շախտյորից»: Նշվում էր, որ ՊՍԺ-ն նրան տարեկան 6 մլն եվրո աշխատավարձ է խոստացել, իսկ ուկրաինական ակումբն էլ նույնպիսի գումարով թիմ է հրավիրելու «Միլանի» գլխավոր մարզիչ Մասիմիլիանո Ալեգրիին: Ճիշտ է, Լուչեսկուն էլ չէր բացառել, որ կարող է հեռանալ Դոնեցկից եւ գլխավորել իտալական «Ինտերը»:

Միրչա Լուչեսկուի գլխավորությամբ «Շախտյորը» դարձել է Ուկրաինայի վեցակի չեմպիոն, 4 անգամ նվաճել է երկրի գավաթն ու Սուպերգավաթը: Իսկ 2009-ին «Շախտյորը» նվաճեց ՈՒԵՖԱ-ի գավաթը: Չեմպիոնների լիգայի մրցաշարում լավագույն արդյունքը թիմը ցույց է տվել 2011-ին՝ մտնելով քառորդ եզրափակիչ:



# «Տոտենհեմը» Մխիթարյանին դիտարկում է որպես Մոդրիչի փոխարինող



**Լրատվամիջոցներում շարունակվում են Հենրիխ Մխիթարյանի հնարավոր տեղափոխության մասին տեղեկությունները: Ըստ «Իզվեստիայի», հայ ֆուտբոլիստն ամռանը հավանաբար հայտնվի Անգլիայի պրեմիեր լիգայում: Նրանով հետաքրքրված է Լոնդոնի «Տոտենհեմը», որն արդեն նախնական բանակցություններ է վարել «Շախտյորի» ղեկավարության հետ: Ըստ «Իզվեստիայի», «Տոտենհեմը» մտադիր է ամռան տրանսֆերային շրջանում զգալիորեն ուժեղացնել կազմը: Ամենայն հավանականությամբ, «Տոտենհեմից» կհեռանա թիմի գլխավոր «աստղ» Գարեթ Բեյլը, որի դիմաց ակումբը մտադիր է 60 մլն եվրո ստանալ: Այդ գումարով թիմի ղեկավարությունը ցանկանում է գնել Հենրիխ Մխիթարյանին, «Այաքսի» կիսապաշտպան Քրիստիան Էրիկսենին եւ «Սեւիլիայի» հարձակվող Ալվարո Նեգրեդոյին:**

**Ֆուտբոլային հայտնի գործակալ Կոնստանտին Սարսանիան հաստատել է վերը նշվածը. «Կարող եմ միայն հաստատել, որ Մխիթարյանով շատ ակումբներ են հետաքրքրված, սակայն չեմ նշի, թե կոնկրետ ո՞ր թիմերի մասին է խոսքը: Նա իրոք շատ որակյալ ֆուտբոլիստ է: Նրա վարպետությունն ու ներուժը գրավել են շատ ակումբների ուշադրությունը: Սակայն «Շախտյորն» էլ ուժեղ ակումբ է, որը դժկամությամբ կբաժանվի իր առաջատարից: Ուստի շատ բան պայմանավորված կլինի Մխիթարյանի ցանկությունից եւ ակումբի նախագահ Ռինատ Ախմետովից»:**

**Երկար տարիներ «Տոտենհեմի» առաջատարը խորվաթ կիսապաշտպան Լուկա Մոդրիչն էր: Սակայն մրցաշրջանի մեկնարկից առաջ նրան 30 մլն եվրոյով վաճառեցին «Ռեալին»: Նրա հեռանալուց հետո թիմում խաղը կազմակերպողի դերը ոչ ոք չկարողացավ զբաղեցնել: Ուստի «Տոտենհեմի» գլխավոր մարզիչ Անդրե Վիլաշ-Բոաշը հույս ունի, որ այդ դերը կարող է հաջողությամբ ստանձնել Հենրիխ Մխիթարյանը:**

**Կիեւի «Դինամոյի» եւ ԽՍՀՄ հավաքականի նախկին անվանի կիսապաշտպան Լեոնիդ Բուրյակն էլ համոզված է, որ Մխիթարյանը հաջողությամբ կարող է հանդես գալ եվրոպական առաջատար ակումբներում. «Մխիթարյանը Ուկրաինայի պրեմիեր լիգայի լավագույն խաղացողներից մեկն է: Վերջին տարիներին նա շատ է առաջադիմել: Հենրիխը նաեւ հետխորհրդային ֆուտբոլի ամենատաղանդավոր ֆուտբոլիստներից մեկն է, Հայաստանի հավաքականի եւ «Շախտյորի» առաջատարը: Նա չի կորչի եվրոպական ուժեղ ակումբներում: Սակայն «Շախտյորն» էլ եվրոպական չափանիշներով բավականին լավ թիմ է եւ կարելի է տեղափոխության հարցում չշտապել: Ամեն դեպքում Հենրիխը կայուն բնավորությամբ եւ հիանալի վարպետությամբ անձնավորություն է: Վստահ եմ, որ նա կընտրի ճիշտ ուղին»:**

**Հիշեցնենք, որ Մխիթարյանը մինչեւ 2015-ի ամառը գործող պայմանագիր ունի «Շախտյորի» հետ: Նրա տրանսֆերային արժեքը ներկայումս հասել է 17 մլն եվրոյի: Վերջերս Հենրիխ Մխիթարյանը հայտարարել էր, թե ամռանը պատրաստվում է հեռանալ «Շախտյորից», ինչն ուկրաինական ակումբի ղեկավարությանն անհանգստանալու տեղիք էր տվել: Իսկ ահա եվրոպական ակումբները բավականին աշխուժացան եւ սկսվեց մրցավազքը Մխիթարյանին ձեռք բերելու համար: Ճիշտ է, օրերս ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանը հայտարարել է, թե Հենրիխը պարզապես կատակել է՝ նշելով «Շախտյորից» հեռանալու ցանկության մասին: Սակայն, ինչպես ասում են, յուրաքանչյուր կատակում ճշմարտության հատիկ կա:**

# Հայ սամբիստների հաջող ավարտը

Մոսկվայում անցկացված Ա. Խառլամպիեւի հուշամրցաշարում, որը նաեւ սամբոյի աշխարհի գավաթի փուլերից մեկն է, հաջող հանդես եկավ 74 կգ քաշային Մավրիկ Նասիբյանը: Հայ սամբիստը հաղթելով բոլոր մրցակիցներին, մարտական սամբոյի մրցաշարում մտավ եզրափակիչ: Վճռորոշ գոտեմարտում Նասիբյանը պարտվեց ռուսաստանցի Զաուր Ազիզովին ու դարձավ արծաթե մեդալակիր:

Տարբեր հավաքականների կազմերում 4 հայ սամբիստներ մեդալներ նվաճեցին: Սպորտային սամբոյի մրցաշարում Բելառուսը ներկայացնող Վահե Թութխալյանը (68 կգ) դարձավ արծաթե մեդալակիր: Իսկ ռուսաստանցի Էդուարդ Կուրղինյանը (100 կգ) բրոնզե մեդալ նվաճեց մինչեւ 100 կգ քաշայինների պայքարում: Մարտական սամբոյի մրցաշարում էլ հիանալի հանդես եկավ ռուսաստանցի Արամ Խամայանը՝ ճանաչվելով ուժեղագույնը: Արսեն Խանջյանն էլ հաղթող դարձավ մինչեւ 90 կգ քաշայինների սպորտային սամբոյի մրցաշարում:

Կանանց մրցապայքարում մինչեւ 48 կգ քաշային կարգում ոսկե մեդալ նվաճեց Ռուսաստանը ներկայացրած Շողիկ Ծատուրյանը, իսկ նրա հայրենակցուհի Գայանե Հարությունյանը 2-րդն էր: Մինչեւ 56 կգ քաշայինների մրցավեճում էլ սպորտային սամբոյի մրցաշարում ուժեղագույնը ռուսաստանցի Սուսաննա Միրզոյանն էր: Իսկ մինչեւ 72 կգ քաշային կարգում ռուսաստանցի Գալինա Համբարձումյանն արժանացավ բրոնզե մեդալի:

Մրցումների ժամանակ տեղի ունեցավ 2012-ի աշխարհի գավաթի խաղարկության արդյունքների ամփոփումն ու մրցանակակիրների պարգեւատրումը: Սամբոյի եւ ձյուդոյի օլիմպիական մարզադպրոցի Արցախի մասնաճյուղի սան Աշոտ Դանիելյանը գրավեց 2-րդ տեղն ու արժանացավ արծաթե մեդալի, դիպլոմի ու դրամական պարգեւի: Նա հաղթողին զիջեց ընդամենը մեկ միավոր: Ընդ որում հայ սամբիստը աշխարհի գավաթի փուլերից 2-ին չէր մասնակցել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

# Օրվա հետքերով

## Ասա՛ աչքերիդ գույնը, ասեմ՝ ով ես դու



Մարդու խառնվածքի եւ աչքերի միջեւ եղած կապը հայտնի է հնուց: Մենք աչքերով գնահատում ենք մարդկանց անկեղծությունը, վերաբերմունքը, ջերմությունն ու անտարբերությունը: Աչքերում արտացոլվում են մարդու մտքերն ու զգացմունքները: Աչքերով կարելի է «խժռել», «ծանթել», «դաշունահարել», գերել ու ոչնչացնել...

- Աչքերով հնարավոր է ճանաչել մարդուն, զգալ խառնվածքն ու մտքերը: Նրանք կարող են նաեւ վկայել հիվանդությունների հանդեպ ունեցած հակվածության մասին, նույնիսկ հնարավորություն տալ կանխորոշելու արդեն զարգացող հիվանդությունը, -բացատրում է բժիշկ-հոգեբան Վարդուհի Խաչատրյանը: - Մարդու աչքերը, դրանց գույնը շատ բան կարող են ասել նրա բնավորության մասին:

Այժմ հայելու մեջ նայի՛ր աչքերիդ եւ պարզիր քո էությունը:

Գիտնականներն ապացուցել են, որ երկնագույն աչքերով մարդիկ համառ են ու զգացմունքային: Նրանց տրամադրությունը հաճախ է փոխվում, կամակոր են, հաճախ՝ եսասեր ու հիշաչար: Կապուտաչյաները ռոմանտիկ են, նոր գաղափարներով շուտ ոգեւորվող եւ նույնքան արագ հիասթափվող: Նրանցից շատերը հակված են ինքնագերագնահատման: Կապուտաչյաների յուրահատկություններից է ճշմարտասիրությունը: Իսկ մոխրագույն աչքեր ունեցողներն ուղղամիտ են, խիզախ եւ տոկուն: Նրանք ձգտում են հասնել իրենց երազանքին՝ հաղթահարելով ամեն դժվարություն: Վերջիններս խանդոտ են, հաճախ նրանցից շատերը կյանքում սիրում են միայն մեկ անգամ: Նրանց հետ դժվար է լեզու գտնել, ուժեղ կամքի տեր են, երբեմն՝ դաժան: Մուգ շագանակագույն աչքերով մարդիկ, որպես կանոն, մարդամոտ են, կենսախինդ, ունեն հիանալի հումորի զգացում: Կողմնորոշվող են, բռնկվող եւ միաժամանակ արագ հանդարտվող, անկայուն են ու հեշտ սիրահարվող: Կանաչաչյաները ուղղակի ծնվել են ղեկավարելու համար, քանի որ լավ երեւակայություն ունեն, վճռական են, իրատես, արդարամիտ ու խիստ, ծայրահեղ իրավիճակներում արագ կողմնորոշվող, կենտրոնացած ու համբերատար: Բաց շագանակագույն աչքեր ունեցողները համեստ են, երազկոտ, մենակություն սիրող: Նրանք ծանր են տանում վիրավորանքը: Իսկ ահա սեւաչյա մարդիկ համառ են ու կամակոր, շատ դիմացկուն են, շուտ բռնկվող ու իմպուլսիվ: Վերջիններս ավելի տաքարյուն են, քան մյուսները: Ամեն ինչում կարգուկանոն են սիրում, աշխատավայրում չեն ներում ամենաչնչին խախտումն անգամ: Շատ ուժեղ զարգացած ինտուիցիա ունեն, կարողանում են արագ կողմնորոշվել յուրաքանչյուր իրավիճակում:

Կարելի է եզրակացնել՝ ասա՛ աչքերիդ գույնը, ասեմ՝ ով ես դու:

**Պատրաստեց**
**ՀԱՍՄԻԿ ԲԱԼԵՅԱՆԸ**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը (քմ) | Շինության մակերեսը (քմ) | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Անդրանիկի փ. 97/5 | Կաթսայատուն | 231.94 | 201.11 | 12,450,000 |
| 2 | Անդրանիկի փ. 40/3 | Կաթսայատուն | 337.28 | 287.92 | 21,500,000 |
| 3 | Էրեբունի 14/4 | Կաթսայատուն | 170.18 | 145.68 | 9,820,000 |
| 4 | Հ/Ա Բ-2 թաղ. 89/3 շին. | Կաթսայատուն | 317.51 | 283.04 | 11,020,000 |
| 5 | Ուլնեցու փ. 3, փակ.4/3 | Կաթսայատուն | 469.01 | 431.6 | 21,500,000 |
| 6 | Շիրակի փ.6/10 | Կաթսայատուն | 309.5 | 207.98 | 14,220,000 |
| 7 | Ա.Սարգսյան 5/2 | Կաթսայատուն | 127.4 | 99.18 | 6,000,000 |
| 8 | Շիրազի 42/5 | Կաթսայատուն | 239.71 | 129.96 | 8,200,000 |
| 9 | Հալաբյան 41/3 | Կաթսայատուն | 257.12 | 161.46 | 10,100,000 |
| 10 | Մալխասյանց 23/6 | Կաթսայատուն | 169 | 144 | 9,600,000 |
| 11 | Սեւակի 7/6 | Կաթսայատուն | 190.29 | 139.2 | 11,400,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ ապրիլի 11-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ ապրիլի 11-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի մակերեսը | Գույքի օգտագործման նպատակը | Վարձակալության տրամադրման ժամկետը | Պարտադիր պայման | Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) |
|---|---|---|---|---|---|---|
| *Աճուրդով վարձակալության տրամադրվող գույք* | | | | | | |
| 1 | Վարդանանց փող. հ.18/4 | 71.6 | ստորգետնյա անցման հատվածներ | 25 տարի | Աճուրդի հաղթողը պարտավոր է ապահովել ստորգետնյա անցման բարեկարգումը ամբողջ մակերեսով | 90.0 հազ. դրամ |
| 2 | Բաղրամյան 78 | 108.86 | հասարակական տարածք | 25 տարի | - | 164.0 հազ. դրամ |
| 3 | Բաղրամյան 78 | 31.4 | հասարակական տարածք | 25 տարի | - | 50.0 հազ. դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձիք, ովքեր Երեւան համայնքի բյուջեյի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայս ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ. ապրիլի 11-ին ժամը16:00-ին, ք. Երեւան, Արգիշտիի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2013թ. ապրիլի 11-ը, ժամը 14:00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը.

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, 1 զանգված, 18 թաղ., թիվ 10 հասցեում գտնվող 125.33 ք.մ. ընդհանուր մակերեսով այգետնակ, հողամաս՝ 0,0600 հա: Լոտի մեկնարկային գինը՝ 5100000 (հինգ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդը՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1, 3-րդ հարկ հասցեում 15.04.2013թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ ամեն աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, որի վճարման վերջնաժամկետն է 12.04.2013թ., այնուհետեւ յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդի ավարտը՝ 30.12.2013թ.:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ 12.04.2013թ., այնուհետեւ յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «ՄԻՆԵՐԱԼ ՌԵԶՈՐՏՍ» ԲԲԸ-ին պատկանող հետեւյալ լոտը՝

Հողամաս, ընդ. մակերեսն է՝ 0.899 ք.մ: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Նորքի 5 մ/շ, Միկոյան 15: Լոտի մեկնարկային գինը՝ 105000000 ՀՀ դրամ:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 500000 ՀՀ դրամ, որը պետք է վճարվի կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում 16048053452000 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդային փուլին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական: Աճուրդի առաջին երկու փուլերը դասական եղանակով՝ 12.04.2013թ-ին եւ 15.04.2013թ.-ին ժ. 12:00-ին, այնուհետեւ փուլերը՝ 16.04.2013թ.-ին ժ. 12:00-ին եւ հաջորդող աշխատանքային օրերին նույն ժամին հոլանդական եղանակով, յուրաքանչյուր փուլում մեկնարկային գների իջեցումով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2013թ.:

Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվանը նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ վերը նշված հասցեով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:

### Երեւանի ավագանու ընտրողների ցուցակը www.police.am կայքում տեղադրվել է ներբեռնելու հնարավորությամբ

Հարգելի քաղաքացիներ, Երեւանի ավագանու ընտրությունների ընտրացուցակներում Ձեր եւ այլ անձանց տվյալները ստուգելու նպատակով 2013 թ. մարտի 26-ից կարող եք այցելել www.police.am եւ www.elections.am համացանցային կայքեր կամ տեղամասային կենտրոններ:

Ընտրողների ցուցակում հայտնաբերված անճշտությունները վերացնելու համար մինչեւ 2013 թ. ապրիլի 30-ը կարող եք դիմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն կամ Ձեր հաշվառման վայրի անձնագրային ծառայություն: Անձնագրային ծառայությունը դիմումը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, սակայն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 4 օր առաջ, ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում ընտրողների ցուցակում կատարելու է անհրաժեշտ փոփոխություններ կամ ուղղումներ՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ձեզ:

www.elections.am համացանցային կայքում հրապարակված ընտրողների ցուցակը տեղադրվել է որոնման, իսկ www.police.am կայքում՝ ներբեռնելու հնարավորությամբ:

**«Թեժ գիծ»-ը գործում է**

Երեւանի ավագանու ընտրությունների ընտրացուցակների ճշգրտման, ինչպես նաեւ անճշտությունների վերաբերյալ հաղորդումներ ընդունելու նպատակով 2013 թվականի մարտի 26-ից ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունում գործում է «Թեժ գիծ» ծառայություն՝ 010-53-32-73 հեռախոսահամարով:

***ՀՀ ոստիկանություն***

### ՀՊՃՀ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)

**մարմնակրթության եւ սպորտի կենտրոնը հրավիրում է բոլոր ցանկացողներին մարզվելու կենտրոնում գործող հետեւյալ խմբակներում՝ լող, բազկամարտ, սեղանի թենիս, բասկետբոլ, աթլետիզմ: Ձեզ հետ կաշխատեն բարձրակարգ մասնագետներ: Ցանկացողներին խնդրում ենք զանգահարել 010567784: Հասցե՝ Տերյան 105, ՀՊՃՀ, 21-րդ մասնաշենք:**



ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 26.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: